

ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Թիւ Բ. ՅՈՒՆԻՍ **1869** *Բ. ՏԱՐԻ*

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՕԾՄԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԳԱՐՁԸ

ԵՒ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ։

Նախընթաց Մայիսի 25-ին բաղդատ ունեցանք ակնատես լինելու երկու փառաւոր հանդիսակատարութեանց, որոց մինն էր նորին Վեհափառութեան Օծման երկրորդ տարեդարձը և երկրորդը՝ տեղւոյս կառուցանելն Ուսումնարանի հիմնօրհնէքը։ Առաւօտեան ժամերգութենից յետոյ Ընծայուս Վանահայր Գերապատիւ Գէորգ Վարդապետը մի համառօտ, բայց ազդու ատենաբանութեամբ շնորհաւորեց նորին Վեհափառութեան Օծման երկրորդ տարեդարձը, յայտնելով իւր վանուց միաբանութեան կողմից իրանց ամենայն ջերմեռանդութեամբ պատրաստ լինելը նորա ազգաշահ մտադրութիւնքը և տնօրէնութիւնքը ի կատար հասուցանելու համար, և խնդրելով նորա միակ քաղցր ակնարկութիւնը և խրախոյսը ի լուսաւորութիւն Ազգիս և ի պայծառութիւն Ս. Էջմիածնի։ Յետոյ յետոյ Միաբանութիւնը ժողովեցաւ Վեհա-

բանի մօտ, և Նորին Վ. Հայրապետութեան առջև կատարեց մեր նախնեաց սովորական Մաղթանքը, որոյ խորհրդաւոր խօսքերքը նոր լոյսին մի խոր մտածութեան մէջ էին ընկղմում և երևակայութեան առջև ներկայացնում մի անցեալ՝ լի փառօք և պատուով, ուրախութեամբ և երջանկութեամբ... Մաղթանքից յետոյ տեղւոյս Ռուսումնարանի յառաջադէմ աշակերտներից մինը կարդաց մի խմաստալից ճառ, և ապա Վ. Հայրապետը պահպանիչ ասաց, օրհնեց Միաբանութիւնը և բոլոր հանդիսականներին, որոնք պաժանացան Նորին Սրբութեան աջն համբուրելու և ընդունելու Նորա հայրապետական օրհնութիւնը:

Ս. Պատարագից յետոյ գնաց Նորին Վ. Հայրապետութիւնը ամենայն ուխտիւք և միաբանութեամբ նոր Ռուսումնարանի հիմնարկութիւնը օրհնելու: Ընդհատ շարական և հոգևոր ընթերցմունք ըստ կարգին կատարելից յետոյ՝ Վ. Հայրապետը ինքնին իւր ձեռօք առաջին քարը դրաւ, և ապա գաղղիական լեզուի ուսուցիչ Պ. Ն. Ֆոյեաջեանը ի պինդ հանդիսականաց կարդաց ճառ: Տեղւոյս ժողովուրդը՝ մեծ և փոքր, տղայն և իգական, ասպիճանաւոր և հասարակ, որոնք ներկայ էին հանդիսի կատարմանը, ճառը աւարտելուց յետոյ՝ "Կեցցէ՛ մեր Վ. Հայրապետը" գոչելով և հրացաններ արձակելով՝ թնդացրին օդը փոքր-հարնների հետ ի միասին:

Ա՛աշը պատրաստած էր հասարակաց սեղանատանը, ուր հրաւիրուած էին բոլոր ասպիճանաւորաց խումբը, Վ. աղարշապատու իշխանները և այլազգի պատուաւոր հիւրեր: Ա՛աշու ժամանակին Նորին Վ. Հայրապետութիւնը բաժակ առաջարկեց նախ վասն կենաց Օգոստափառ Կայսեր Ընդ-քանդրի, երկրորդ՝ վասն կենաց Նորին Վսեմութեան Իովկասեան Փոխարքայ Մ. Իսայէլի, և վասն բարօրութեան ընդհանուր Ընդիս Հայոց. և ապա պատուաւոր հիւրերը առաջարկեցին բաժակ վասն կենաց Նորին Վ. Հայրապետութեան, երբ տեղւոյս Մինօպի դիւանատան Ծառայող Պ. Փ. Նաւասարդեանցը կարդաց մի ղրուատ, մի փոնջ վարդ նուիրելով. յետ որոյ աշակերտք սկսեցին քաղցրաձայն երգել աղգային երգեր՝ լի հայրենասիրական և աղգասիրական ղգացմամբ:

Երեկոյին ճրագալոյց էր, և հրեղէն տառերով փայլում էր յետապոյ ղրուածքը, — Կեցցէ՛ Գ.Ն.ՈՐԳ Գ.Կաթողիկոս ամենայն Հայոց:

Հայոց Հայրապետ, Հայոց Տէր,
Կեցցէ՛ յաւէտ հաստատուն:

Ընդ այսպիսի մեծ ուրախութեամբ և հրճուանօք անցուցինք նախընթաց մայիսի 25-ը օրը, որոյ ոչքան նշանակութիւն ունենալը մեր հետաւոր ապագայիցներին զգալի կացուցանելու համար, քաղցր է մեզ առաջարկել նոցա յետագայ խորհրդածութիւնը.

Մէկ մարդ այնքան մեծ է, ոչքան մեծ է նորա օգտաւէտութիւնը ընդհանուր մարդկութեան կամ մէկ ժողովրդի ընդհանրութեան համար: Օգտաւէտութիւնը գործի մէջ է կայանում և ոչ կոչման. կոչումը միայն մէկ միջոց է, որով մարդս կարող է շատ կամ սակաւ օգուտ տալու կարողութիւն և առիթ ունենալ: Համալսարանական վկայական ունեցող մի անձն աւելի միջոց և կարողութիւն ունի մեծամեծ օգուտներ բերելու, քան թէ մի հասարակ դպրոցական. սակայն կարող է և ընդհակառակն լինել, եթէ առաջինը իւր կոչման համեմատ նախապատրաստուած չը լինի, և կամ այնքան բարոյական ձգտումն չունենայ, որ կարողանայ գործով ապացուցանել իւր կոչման բարձր նշանակութիւնը: Այսպէս՝ ռուսումնական, վարժապետ, քահանայ, առաջնորդ, և այլ կոչումնք՝ աւելի բարձր սոյա նից՝ առանց գործոյ՝ լոկ անուններ են. և այն ժամանակ կարող են մեծ սխալանաք պատուիլ, երբ նոցա գործերը անհամեմատ

բարձր և ընդարձակ կը լինին և կանոնեն իրենց յանձնուած գործունէութեան ատ-պարիզը սահմանիլ. իսկ եթէ ընդհակառակն, նոյն ատեն անուանը անգամ արժանի չեն կրելու և աւելի փոքր են քան թէ մի անվեղ, բայց աշխատասէր հողագործ և մի պարզամիտ, բայց ժրաջան կօշկակար. վասն զի Աստուած, կասէ, և ընկեան ի հնոցն, ընդէ՞ր և վերկիրդ խաւսանէ. և կամ. Որուամ շատ ատաւ, շատ խնդրեսցի, և որուամ բազում աւանդեցաւ, առաւել և պահանջեսցին ի նմանէ:

Դու ի՞նչ սասել է ինքն ըստ ինքեան «մեծ». միթէ մէկ մարդ կարող է աւելի մեծ լինել քան թէ մի ամբողջ ժողովուրդ, քան թէ ամբողջ մարդկութիւնը: Այնևնին: Ժողովուրդ ասած բանդ բոլորովին նման է մէկ անհատի: Ունհատը ունի ձեռք, ոտք, գլուխ և այլն: Կարո՞ղ ենք ասել միթէ, որ գլուխը մեծ է, քան թէ ոտները, ոտները՝ քան թէ ձեռները, ձեռները՝ քան թէ աչքերը և այլն: Ընդարձակ համեմատական աշխարհ է, այդ իրաւ է. բայց մի բան, որ պարզ է, ամբողջ է, որիշ է, ինքնուրոյն է, նորան իւր հետ համեմատել կարելի չէ, այլ մի այլ բան այլ բանի հետ կարելի է համեմատել՝ նոցա իրարու մէջ ունեցած տարբերութիւնը, մինի քան զմիւսը աւելի ունեցած արժանաւորութիւնը կամ թերութիւնը իմանալու համար: Արդարև մարդ է իւրքրոյր անդամներովը ի միասին. զատիր առանձնացնելով նոցանից, (եթէ կարծուի՞ս թէ կայ,) նա կը զրկուի կատարեալ մարդ լինելուց: Ընդհակառակն և ժողովուրդը մի ամբողջութիւն է, բաժանիր նորան զանազան դասակարգերի, մինը քան զմիւսը աւելի արտօնութիւն ունեցող, մինը ծառայ և միւսը տէր, ըստ դրական իրաւանց և օրինաց, նա այլ ևս չէ ժողովուրդ, չէ՛ նա ժողով մարդոց, այլ զազանները և անասունները, բաղկացած խառնիճաղանճ մի խումբ: Դու այսպէս բնական է նորան լինել իւր մեծաւոր զարգացման ստորին շրջաններումը, վասն զի մի բան, որ սկզբումը լինում է չար, յետոյ դարս չարութիւնը սովորութիւն դառնալով և ժառանգական կերպով անցնելով յետագայ սերունդին, չարութեան ժանրքները այլ ևս սարսուռ չեն բերում մարդոց վերայ, մինչև չէ բացվում նոցա մոգի աչքը, որով միայն կարելի է նշմարել և լուծել արիւն և մարմին դարձած չարութիւնը:

Մի ժողովուրդ, քանի որ նա դեռ ևս մեծաւոր զարգացման ստորին շրջաններումն է, նա այդ ժամանակ իւր ամենայն գործը ձգում է մի անձևութեան կատարելոյն ձեռք և ինքը իւր մասին բոլորովին անհոգ մնում: Փոքր ինչ յետոյ՝ երբ բնականապէս աւելի զօրացած անհատների մէջ զարթնում է բանական կամ բարոյական ձգտողութիւն, նոքա ընդհանուրին իրենց ձեռքի տակ հաւաքելով իրենք իրենց միջնորդ են ներկայացնում անձևութեան նպատակին և ժողովրդի մէջ: Այդ ժամանակ մարդիկ նոցա ճանաչելով իրենց երկրային տէրը ի վերուստ նշանակած, իրենց ամեն հոգսը և կարիքը նոցա վերայ բարձելով՝ ինքեանք մի կողմ են քաշվում և դառնում կոյր հրամանակատարք, — անում են այն, ինչ որ հրամայվում է նոցա անելու, և ոչինչ աւելի: Այսպէս աշխարհիս երևելի բռնակալները ամենայն կերպով ճնշել, տկարացրել են իրանց հպատակների մտաւոր զարգացումը, որպէս զի նոքա աչք չբանան, ազատութեան ձգտողութիւն չզարթի նոցա մէջ: Ինչպէս նաև քուրմերը և քրմապետները ամենայն ջանքով աշխատել են ծածկել ժողովրդից իրանց պիւտաբանութիւնը և առասպելաբանութիւնը, իրենց իրր-սուրբ գիրքը ի վերուստ ինձած, պահպանել են նորան մի ոտոշ քառակ մէջ և չեն ուսուցել ժողովրդին, որ մի գուցէ նոքա աչք բանան և հասկանան, որ այդ ոչ թէ սուրբ գիրք է, այլ առասպելաբանութիւն է միանգամայն և խորհրդաւոր

թեան գործիք*)։ Նրբ որ մի ժողովուրդ ճնշուած է այսչափ, այդ միջոցին նորա հոգին մի բարոյական և անձնազոհ ոգեւի նշանակութիւնը եւս այնքան է, որչափ և մի բռնակալի. վասն զի վատը, ինչպէս ասացինք, նոցա համար մի սովորական բան դառնալով՝ լաւ է թվում. իսկ ստուգապէս լաւին միտքը չէ հասնում։ Չանի՞ քանի անգամ Խորայէլացիք ցաւեցուցին Ս՝ովսէսի պէս աստուածախօս, հայրենասէր, աղգասէր և անձնանուէր մարգարէի սիրտը, ասելով, թէ Եգիպտոսումն աւելի լաւ էինք ապրում։ Եւ ինքը՝ մեծն ի մարգարէս Ս՝ովսէս՝ քաջ գիտէր, որ այսպիսի մի ժողովուրդ երբէք կարող չէ իսկոյն իւր լաւն ու վատը, մինչև չզարդանայ նորա միտքը. ապա թէ ոչ՝ նորա համար մի և նոյն կը լինի սոխն ու սխտորը Եգիպտոսի, մանանան և լոսամարգին Սինայի։ Նոցա մտաւոր զարգացմանը նայելով՝ աւելի բնական էր նոցա հոգեթի ղլուխ պաշտելը, քան թէ երկինք և երկիր Ստեղծողին։ Եւ քաջ գիտէր, որ նախապաշարմունքներից և բռնութիւններից կաշկանդուած ծնողքին դժուարին է ձեռնպահութեան մօտեցնել, զուր, կասկ, չէք կարող տեսնել Աստեաց երկիրը, այլ ձեր որդիքը կը տեսնեն։ Եւ որպէս զի նախապատրաստէր մի ազնիւ սերունդ, ճշմարիտ Աստուծոյն ճանաչող և պաշտող մի ազգ, գրում է նա Աստուծոյ պատուիրանքները և մեծագործութիւնները. մի առ մի ցեղի ուստերանում է իւր ղրքերի պարունակութիւնը և պատուիրում նոցա աւետեան տօնի օր կարդան՝ ի լուր ժողովրդեան, որ տեսնեն իրենց անցեալը, նորը համեմատելով իրանց ներկայի հետ, զգան իրանց խստասրտութիւնը և Աստուծոյ զթառատութիւնը. իրանց տգիտութիւնը և Աստուծոյ իմաստութիւնն ու ներողամտութիւնը. իրանց մոլորութիւնը և Աստուծոյ հրաւէրը. իրանց օրէնքների սրբութիւնը և հեթանոսաց անօրէնութիւնը. իրանց լոյսը և նոցա խաւարը։ Օգան էակների արարած լինելը և Արարչէ անեղ և անսահման լինելը, որ չշեղին ուղիղ ճանապարհից, չընկղմին մոլորութեանց մէջ։ Այս միակ ճանապարհով միայն կարողացաւ հասնել իւր

*) Հնումը ասիական ազգերի մէջ մանաւանդ Եգիպտոսումը եւ Հնդկաստանումը ժողովուրդը բաժանված էր չորս ղլխաւոր դասակարգութիւնների — զինուորական, կրօնաւորական, վաճառականական եւ երկրագործական կամ արհեստաւորական։ Այս դասակարգութիւնները յայտնի են պատմութեան մէջ Քաստ բառով։ Քաստը ժառանգական էր ըստ տեղական օրինաց, այնպէս որ ոչ ոք ստորին քաստից իրաւունք չունէր բարձր քաստի մէջ ընդունուելու, այլ հօր պարապմունքը որդուն անցնելով պիտի շարունակուէր որդոց որդի։ Հընդկաստանումը բացի այս չորս ղլխաւոր քաստերից էլի շատ աւելորդ քաստեր կան—ծառայողների, գործավարների եւ այլն, որոնք մինը քան դժուսը աւելի արհամարհուած եւ անարգուած են միւս քաստերից։ Ըստ տեղական օրինաց, եթէ այդ արհամարհուած քաստի մի անդամը կը համարձակի նստել բարձր քաստի անդամի նստած տեղը, դորա համար նա պատուիրում է կամ ենթարկվում ծանր պատժի. եթէ խօսել է մեծերի մասին արհամարհանօք, այրում են նորա շրթունքը. եթէ բացարձակ անպատուել նոցանից մինին, նորա լեզուն կտրում են. եթէ անհնազանդացել է փորր ինչ Բրամինին (կրօնականին) ենթարկվում է մահու պատժի. եթէ նորա հետ մի կարգում է նստել մի շորի վերայ, այլանդակում են նորան անբուժելի կերպով. եթէ հետաքրքրութենից շարժուած, լսել է նոցա իբր-սուրբ գրքի ընթերցմունքը, նորա ականջները եռացրած իւղ են ածում. եթէ անգիր է արել դորանից մի բան, նորան սպանում են. եթէ յանցաւոր է գտնուել մի բանի մէջ, նորա պատիժը աւելի սաստիկ է լինում քան եթէ բարձր քաստի անդամինը, իսկ Նորան սպանողին այն պատիժն են տալիս, ինչ որ շուն, կատու, աղուաւ եւ այլ չնչին կենդանեաց սպանողներին։ Կան եւ այլ քաստեր, որոնք յայտնի են «պարիա», «պուլիա» անունով. դորա իրաւունք չունին քաղաքի կենդրոնում բնակելու, Գանգէս գետումը լողալու. միւս բաստերը դոցա հետ յարաբերութիւն ունենալը պղծութիւն են համարում։ Եւրոպական լուսաւորութիւնը դեռ եւս չէ կարողացել ներաշնել այս ծշուաուների դրութիւնը։

նպատակին Մեծ Աստղային և այնքան յարդ ու պատիւ առացաւ իւր նախապատրաստած սերնդից, որ վախենալով , թէ մի գուցէ յետագայ սերունդք առաւելածայնեն նորան և պաշտեն, անհետացաւ նոցանից, որ ակնարկ ապագայի է, թէ ոչ փառք և ոչ պատուասիրութիւն ստիպեցին նորան այս մեծագործութիւնքը կատարել, այլ միայն իւր առ Աստուած և առ իւր ազգն ունեցած անսահման սէրն էր նորան ոգևորողը և այն նորա միակ վարձքը:

Ընդհակ մարդկութեան մէջ երբեմն դիսաւոր աստղերի պէս երևցած բարոյասէր, ուսումնասէր և ազգասէր անձինք, որոնք զգացել են, որ մանաւանդի բարգաւառութիւնը ապաքաղդ ընդհանուրի մէջ ապերջանկութիւն է միանգամայն և թշուառութիւն, ամենայն ջանք և ճիգն ի գործ են դրել մերթ բանիւ և մերթ գրով հասկացնել ժողովրդին իւր սեփական իրաւունքը,շարժել նորա ինքնագործունէութիւնը, և իրրև ամենահիշա միջոց հասնելու այդ նպատակին, մանաւանդ են եղել Ուսումնարանի վերայ: Ուսումնարանը, այս մարդկային սեռի ջուրն ու հոգին, որից առանց կրկին ծնանելու նորան փրկութիւն չկայ. ի սկզբանէ անտի մինչև մեր օրերը մարդասէից և բռնասէր մարդոց աչքում փուշ է եղել. վասն զի գիտ է, որ մի ամբողջ ժողովուրդ տգիտութեան, աղքատութեան, նախապաշարմանց և հազար ու մէկ քստմնելի հանգամանքների անդութ և զազրատեսիլ ճանկերից աղատում և մարդավայել վիճակի մէջ է ձգում: Դա է, որ իրրև մի երկրորդական աւազան՝ մի ազգի բոլոր անդամներին նորին ծնանում, մի սիրտ և մի հոգի, մի արիւն և մի մարմին է առնում ամենին: Դա է, որ մի ազգի մէջ ցանուած չար որոմները ժողովում և այրում է անշէջ հրով, որ հերկում է մի բոլորովին խոպանացած անդաստան, և նախապատրաստում նորան բուսուցանելու այն բարի բարի սերմերը, որ մեր Արարիչը ի սկզբանէ դրել է նորա մէջ և երկայնամտութեամբ սպասում է նորա աճելուն և բեղմնաւորելուն: Եւ որովհետև միայն գողը կուզէ մութ գիշեր, ձկնորսը պըղտոր ջուր, խաբեբան՝ յիմարութիւն, անբազդամը՝ մոլութիւն, բռնակալը՝ երկիւղ և ապիկութիւն, աղուէսը՝ որջ, թռչունը՝ բոյն և այլն և այլն, Ուսումնարանը գտում, մաքրում է այդ աղտոտի և անվայել յատկութիւնքը, էլ այնուհետև մարդոց մոլութիւնը անունդ չէ գտնում և հետևապէս անհետանում է մոլութիւնը. երկիրը երկինք է փոխվում և մարդը Աստուած, զի «Ոյք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել»:

Այս ամենակարևոր պահանջմունքը քաջ յայտնի լինելով և մեր հասարակաց Հօրը, Փրկաւատաւ Աղգասէր Հայրապետին, իւր վարդապետութեան օրերը անգամ, ուր որ դրել է իւր ոտքը՝ նոյն տեղ կատուցել է և Աղգային Դպրոցներ: Եթէ ընդ իշխանութեամբ այլոց ժամանակը՝ այս փրկարար հիմնարկութիւնքը նորա սրտին մօտիկ և սիրելի առարկան է եղած, որքան աւելի այս օրուան օրա նորա համար սիրելի և փափաքելի է բոլորովին իւր աղգօգուտ նպատակներին յարմարացուցած Ուսումնարանների կատարումը: Բայց եթէ, ՏԷր մի արասցէ, չյաջողի նորան հասնելու իւր նպատակին, արդեօք ոչ կը լինի մեղաւոր: Մենք արդէն պատասխանեցինք այս հարցին նախընթաց պարբերութեանց մէջ, բայց դարձեալ կը կրկնենք որ՝ եթէ մի ազգի մատաղ անդաման նախապատրաստուած չէ ընդունելու իւր մէջ բարի սերմեր, սերմնացողը թող լինի Աստուծոյ որդի, չի ածիլ, չի բեղմնաւորիլ նորա մէջ, զի «Ձիւրան եկն և իւրքն զնա ոչ ընկալան»: Բայց այսպիսի հնարագրութիւններ անտեղի է անել մեզ այժմ, երբ տեսնում ենք ակնարկ, որ մեր Ազգը

հլ այն չէ, ինչ որ էր մի քանի դար առաջ: Սկզբի պահանջմունքը այժմ մեծ է, կարօտութիւնը ակներև. նա դժուար է իւր թերութիւնքը, չի հասել մտաւոր զարգացման այն կէտին, որ ինքնուրոյն լուսցանէ իւր թերութիւնքը. նա, հարազատ որդու հպատակութեամբ, ցանկանում է, որ իւր բոլոր ձեռնարկութեանց մէջ իւր սրտի միակ վսեմութեան, իւր նախնի փառաց միակ ժառանգի սուրբ մտան ու օրհնութիւնը լինի նորան առաջնորդողը:

Այս օրուան օրս մեր ազգութիւնը քաղաքական չէ, այլ բարոյական: Այսպիսի պետութեան մէջ ի՛նչ տեսակ մարդոց մէջ աւելի կարօտութիւն ունինք մենք, եթէ ոչ բարեկիրթ, ժրաջան, ազգասէր և անձնանուէր հոգևորականների մէջ: Երբէք պատահած չէ, որ մի ազգ ունենալով լուսաւոր և գիտնական հոգևորականներ, նա թշնամութեան մէջ լինի եղած, և նորա հակառակ, երբէք պատահած չէ, որ մի ազգ երջանիկ լինի, եթէ նորա հոգևորականներից բաղկանում է մի ոգի և խաբեբայ պատակարգ: Մարդկութեան պատմութիւնը ակներև ցոյց է տալիս, որ իւրաքանչիւր ազգ իւր հոգևորականների բարոյական և մտաւորական անկման հետ ընկնում է և կանգնման հետ կանգնում: Այն մի ժողովրդի հոգին՝ կեանքը հոգևորականների ձեռին է, նորա են նորա պաշտպանողը և մանողը Աստուծոյ և Թագաւորի առջև, նոցա հետ կապողը և արձակողը: Մենք չենք տեսնում ոչ մի ժամանակ, որ Աստուծոյ կամ Թագաւորի ազդեցութիւնը առանց միջնորդութեան հոգևորականների ներգործելիս լինի ժողովրդի վերայ: Ակզբում ժողովուրդը նկատում է մեղ իբրև մի եղեակայ, որի լեզուն ոչ այլ ոք գիտէ, բայց միայն հոգևորականը. ուստի և անմիջապէս դառնում է նորա թարգմանը, որ ուրիշի միտքը նորան հասկացնէ, նորա միտքը ուրիշին: Մի կողմ դնենք հեթանոս ազգերը, որոնք անմիջապէս կախումն են ունեցել իրանց կրօնականներից. վերցնենք Աստուածաշունչ գիրքը, նորա մէջ անհամար օրինակներ կան, որոնցով կարող ենք ապացուցանել, թէ որչափ մեծ է եղել հոգևորականների ազդեցութիւնը ժողովրդեան վերայ: Աստուած Մովսէս մեծագործին փարաւոնի մօտ ուղարկելով՝ մանաւանդ է լինում Ահարօնի վերայ, որ նա խօսի թէ փարաւոնի և թէ ժողովրդեան հետ. սորա պատճառը ոչ այլ ինչ է եթէ ոչ նորն իսկ Ահարօնի հոգևորական լինելը, որով անշուշտ աւելի ազդեցութիւն կունենար ժողովրդի վերայ, քան թէ Մովսէսն ինքը: Այսպէս Աստուած միշտ հոգևորականների ձեռով է խօսում ժողովրդի հետ ասելով՝ — Սա՛ փարաւոնին, որ ազատէ իմ ժողովուրդը: Սա՛ ժողովրդին, որ սուրբ պահի իրեն: Վրէժ պահանջեմ իմ ժողովրդի վերայ, եթէ դու չհնազանդես անօրինին և նա իւր անօրէնութեան մէջ մեռնի, նորա արիւնը քեզանից կը պահանջեմ: Թագաւորներն էլ հոգևորականներին են դիմում, որ նոքա ժողովրդի սերը և հաւատարմութիւնը դէպի իրեն գրգռեն: Ժողովուրդն էլ հոգևորականներին է դիմում, և նոցա միջնորդ շինում իւր և Աստուծոյ մէջ, իւր և Թագաւորի մէջ: Սապէ՛ք Թագաւորին, որ թեթևացնէ իւր հարկը, ասացէ՛ք Թագաւորին որ վերցնէ իւր բռնութիւնը. աղօթեցէ՛ք Աստուծուն, որ այս ինչ պատիժը վերցնէ մեզանից: Նոքա էլ միշտ և ամեն ժամանակ կատարել են ժողովրդի խնդիրքը, պահպանել են նորա կեանքը, հարազատ մօր պէս խնամք են ունեցել նոցա վերայ՝ Աստուծոյ հրամանին համեմատ. և երբ չեն կարողացել ուղղակի հասնել իրանց նպատակին, նոցա ոգուն ոյժ և զօրութիւն են տուել, մխիթարելով և. ոգևորելով, որ առանց ընկճուելու՝ կա-

ղողանան տանել բնական և քաղաքական դժբաղդութեանցը։

Պարզուս մարդի զարդացումը ընդհատումն չունի։ Մի կէտի վերայ կանգ առնել և կաշկանդուել նորան անհնարին է։ Իակ բարոյական ճշմարտութիւնը միշտ մընում է անփոփոխ. նա ոչ աւելանալ ունի և ոչ նուազել. նա էր, կայ և կը լինի միշտ մի և նոյնը։ Սկզբումը մարդոց միակ ուսմունքը այս բարոյական ճշմարտութիւնն է և գորան ուսուցիչ լինելով հոգևորականք, ժողովրդի միակ դաստիարակը լինելով հոգևորականք, այդ պատճառով մեծ յարգ ու պատիւ էլ ունենում են նորա առջև, և հետևապէս մեծ ազդեցութիւն էլ գործում են նորա վերայ։ Բայց՝ միայն հոգեկան յայտնութիւնքը չեն, որ ազդեցութիւն ունեին մարդուս զարդացման վերայ. բնական և քաղաքական հանգամանքներն էս ոչ պակաս ազդեցութիւն ունեին մարդուս վերայ։ Երբ որ այս վերջին հանգամանքները բարեյաջող են, այդ ժամանակ ժողովրդի մէջ ծաւալվում է այլ և այլ ուսմունք, որոնք միայն ըստ հերւութիւն են տալբեր կրօնական ուսմունքից, բայց բուն հոգուն նայելով առաջնոյ մի և նոյն նպատակն ունեին։ Հոգևորական մասը մեզք է համարում խոսովանել այս ճշմարտութիւնը, ուսոի և ղուրկ է մնում դրանից և գա պատնում է ժողովրդի սեփականութիւն։ Այդ ժամանակ ժողովուրդը երեք զլխաւոր դասակարգի է բաժանվում — անուս, ուսումնական և կրօնական։ Հետևեալ շատանում է ուսելոյ թիւը, և որքան շատանում է, այնքան նուազում է կրօնականների ազդեցութիւնը և նոցա ուսմունքը մի շինծու և խաբեպայ բան է թվում ժողովրդին, ինչպէս և առաջնոյը՝ նոցա։ Եւ այս շրջանի մէջ թէև աւելանում է ժողովուրդի մտաւոր ոյժը, բայց միակողմանի լինելով մի նոյն քան էս պակասում է նորա կենսական, հոգեկան ոյժը, որ եթէ երկար ժամանակ շարունակուի այսպէս, նա հետզհետէ կը նուազի, կը ոչընչանայ և կանհետանայ։ Բայց բանն այդ տեղը չէ հասնում։ Երբ մարդ ինքնաճանաչութեան է գալիս, դգում է իւր սխալմունքը, ձեռք է վերկնում կրօնականին և փոխանակ չարի չար հատուցանելու նորան էլ բերում իւր հաւասարակից է անում մարդի կողմանէ, որ նա կարողանայ հասկանալ նորա լեզուն և ուղիղ թարգմանը լինել, ինչպէս որ էր նորա երեխայ ժամանակը։ Այսպէս երբ մի ազգի հոգևորականք և աշխարհականք ձեռք ձեռքի տուած միաբան սիրով յառաջ են գնում, այդպիսի ժողովրդի թէ ոգևկան և թէ մնաւոր ոյժը օրէցօր աճում և զարգանում է և հետևապէս հոգևորականք սանանում են իրանց կոչմանը նախկին փառքն ու պատիւը։

Այս օրուան օրս մենք դոհ չենք մեր հոգևորականներից, չենք պատուում նոցա ըստ արժանւոյն։ Ինչ է սորա պատճառը, ինչու համար մեր նախնի երջանկայիշատակ հոգևորականք էս այս աստիճան անպատուած էին.—վասն զի այն ժամանակ նոքա ըստ պարզացման անհամեմատ բարձր էին ժողովրդեան զարգացմանից, ուսոի և մեծ յարգ ու պատիւ ունէին նորա առաջև. բայց այժմ բոլորովին ընդ հակառակն ենք տեսնում։ Գիտութիւնը և ուսումը անցել է աշխարհականների ձեռքը, հոգևորականք յետ են մնացել. երկոցունց մէջ մնաց համապատասխանութիւն չկայ. մինը միւսին ոտքած է համարում, միւսը մեկէլեն աղանգաւոր. և որովհետև այդ սուտասնուն աղանգաւորների թիւը այժմ շատացել է, փոխանակ այսպեսից այնտեղից հալածուելուց, այժմ իրանք են հալածում, անպատուում և նախատում։ Հոգևորականը, որ պիտի լինի բարոյականութեան դաստիարակ, առաքինութեան հսկելն, որդոց մկնիթարիչ, միով բանիւ որ պիտի այն աստիճան յարգ ու պատիւ ու-

նենայ իւր ժողովրդի՛ մէջ, որ նորա ձայնը քաղանձաւներու արձագանք չը լինի, նորա խօսքը գետինը չընկնի, այլ համարմունքը պահպեցրել է նա ոչ թէ նորա համար, որ ժողովրդի սէրը, հաւատը սաւել է, կամ իբր թէ աղանդաւորները շատացել են, այլ որով հետև մնաւոր զարգացման մէջ շատ և շատ յետ է մնացել նա)։

Ահա այս ազգակործան երևութքի առաջքն առնելու նպատակով մեր հասարակայ հայրը, մեր Վ. Հայոց Կաթողիկոսը՝ Նախընթաց Մայիսի 25ին՝ իւր Օծման երկրորդ տարեդարձի օրը մի հոյակապ ուսումնարանի հիմն դրաւ, որոյ միակ և եթ նպատակը պիտի լինի տալ մեր ազգին բարոյական և ուսումնական դաստիարակութիւն։ Ասում եմ՝ տալ մեր Ազգին, ուրեմն Ազգի համար են լինելու այդ հոգևորականները, ազգի բարօրութեանը պիտի ծառայեն։ Ուստի կը յուսանք, որ ազգը իւր սեփական, իւր անձին վերաբերեալ բոլոր հոգսերը չի բարձիլ մի այնպիսի կաթողիկոսի վերայ, որոյ շրջակայ հանգամանքներին նայելով, բացի Աստուծոյ միակ ողորմութեան և Ազգի միաբանական սիրով աշխատութեան՝ ուրիշ բանի վերայ կարող չէ պինդ իւր յոյսը և հեռուապէս սեանել իւր հանրաշահ մտադրութեանց և ձեռնարկութեանց օգտաւէտ արդիւնքը։ Այո՛, նա այս օրուան օրս մեր Ազգի պետն և դլուխն է, սակայն, ինչպէս արդէն ասացինք, դլուխն ինքն ըստ ինքեան ոչինչ նշանակութիւն չունի, առանց ամբողջութեան միւս անդամների, որ է Ազգի ընդհանրութիւնը և ամբողջութիւնը, թէ մեծ և թէ փոքր, թէ աղքատ, և թէ հարուստ, թէ աշխարհական և թէ հոգևորական։ Գլուխը մտածում է, ոտները պիտի երթան՝ ձեռները պիտի գործեն։ Կը յուսանք ուրեմն, որ մեր Ազգը այս իրեն պատի ամենամօտիկ հանդամանքի վերայ անտարբեր չի նայիլ, այլ ամենայն կերպով, թէ բանիւ և թէ մտօք, թէ բարոյապէս և թէ նիւթապէս կաշխատի՝ ի կատար հասուցանել իւր իսկ սրտի խորհուրդները, շնորհիւ իւր Վ. Հայոց Կաթողիկոսին՝ ԳՐԻԳՈՐԳ Դ-ի և իւր Ազդմած Կայսեր՝ ՎԱԼԵՐԱՆՈՍ Բ-ի, որոց օրերուն արդէն բացուել է լուսաւորութեան արեգակը իւր ճառագայթները թափանցել բազմադարեան և բազմավաստակ Հայկազեան սերնդի մէջ։

Գ. Աղայեանց

---

*) Ա. յօրիից չորս հինդ տարի առաջ մեր Մայր Աթոռը խելացի եւ ուսումնական մարդոց վերայ բանադրանաց եւ յանդիմանութեան կոնդակներ էր ուղարկում. իսկ մօտը եկողներին եւ իրանց ազդաշահ ծառայութիւնը առաջարկողներին դուրս անում անպատուելով։ Այս մի քանի մասնաւորների սխալմունքը որ աւելի կրօնասիրութեան եւ բարեսրտութեան հետեւանք էր, քան թէ չարամտութեան եւ ազդատեցութեան, վերադրեցաւ Սուրբ Էջմիածնի ընդհանուր միաբանութեանը, որ երբէք զուրկ չէ եղել հեռատես եւ խելացի անդամներից, եւ տեղիք տուաւ մեր ուսումնականներին մեր հոգեւորականութեան մէջ երեւակայել միջին դարու արեւմտեան հոգեւորականութեան պատկերը, որ աններելի սխալմունք էր։ Ս. Էջմիածինը բաց է այժմ ճշմարիտ ազդասէրների համար, գործունեայ եւ աշխատասէր մարդոց համար։ Ջունի այլ եւս իւր առաջնոյն հարստութիւնը, որ կարողանայ դրամով գրաւել օդտաւէտ մարդոց, բայց ճշմարիտ ապդասիրի համար ցանկալի է առաւել գործունէութեան լայն ասպարէզ ունենալը, քան թէ դրամական մեծ վարձատրութիւնը։ Կը յուսանք ուրեմն, որ մեր ազդի եռանդուն եւ ազդին ծառայելու նախապատրաստուած անձինք այլ եւս չեն կասկածիր, որ Էջմիածնի մայրական դիրկը պատրաստ է նոցա ընդունելու։ Եւ այսպիսի անծանց այստեղ գտնուելուց յետոյ, կասկած չկայ, որ ազդի ընդհանրութիւնն էլ անտարբեր չի մնալ, այլ ամենայն կերպով կը պահպանէ իւր կեանքի միակ կենտրոնը, իւր սիրտը, առանց որոյ մի օր չի կարող շունչ քաշել եւ կը մատնուի յաւիտենական կորստին։ Ժամանակ է, որ մենք զգանք այս անհերքելի ճշմարտութիւնը. եւ փոխանակ ճշմարիտ սրտացաւութեան, երեխայական մեծամտութեամբ չպղտորենք ազդի միտքը, չյուսահատնիք մասնաւորների մոլութիւններից, խարդախութիւններից։ Այս մասին ուրիշ անգամ երկար կը խօսինք։

ՄԱՂԹԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐԴԱՑՈՒՆ ՃԱՌԸ

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

ԵՒԷ ի հնումն օրինադրեալ էր Իսրայէլեան տոհմին ըստ Դաւթայ յուրախութիւն եւ ի ցնծութիւն «փող հարկանել իդ լուսս ամսոյ աւուր նշանաւորի», քանի՛ առաւել ի դէպ զայ մեզ այսօր նոյնօրինակ եւ դեր քան զայն ցնծութեամբ կատարել եւ նուագօք երգոց դրուատել զայս օր, որ մի է ի նշանաւորաց աւուրց մերոյ յիշատակի մեծի շնորհի եւ պարգեւաց Աստուածպետական Տեսչութեան, զոր սպառ մեզ շնորհելով զՏէրդ մեր դլուխ Եկեղեցւոյ, Հովուապետ մեծ բանաւոր հօտին Քրիստոսի եւ Հայր խնամող տառապեալ որդւոցն Հայաստանի։ Աբդիրեւ ետես Հայաստան յետ Սրբոյն Գրիգորի արժանաւոր ժառանգ Առաքելական Գահուս. ետես եւ հաստատեաց Հովիւս քաջ անճնադիր եւ հաւատարիմ, եւ ի նոցունց բաղումք ստացան զմեծութիւն երախտագէտ զգացմանց ժողովրդոց յիշատակաց արժանի արդեամբք. ետես ասեմ, եւ ի նոսին առաւելեալ ճըշմարիտ գործով միսիթարութեան վշտացելոց եւ պայծառափայլս գործելոյ զԱդգս մեր ամենատեսակ փառօք զմեծն Ներսէս ասեմ եւ զնմանիսն նորին, որ ի սէր Հայրենեաց եւ ի խնամս հայրենի որդւոց նուիրական կենօք սքանչացան. բայց Դու, Հովուապետ մեծ, նկատմամբ պարագայից ժամանակիս, չսխալեմ եԹէ ասացից, առաւել եղեր եւ անցուցեր զամենքումբ։ Եւ ոչ վայրապար են եւ մտացածին ինչ զոր զգամբս. վասն զի եԹէ երանաշնորհքն այնոքիկ աքանչելի երեւեցան ի գործս եւ անմահացան արդեամբք, շնորհ մեծ էր ժամանակին, որոյ ի միոյ կողմանէ Արշակունեան հզօր Թագաւորութիւն Հայոց աջակից գտանէր, եւ ի միւսոյ կողմանէ ճոխութիւնք նախարարաց եւ իշխանաց օժանդակէր. իսկ Դուք, Աստուածարեալ Տէր, որ յայնչափ բարիս փառաւորել ճըդնէք զազգ մեր, ոչ են Ձեզ առընԹեր պետութիւնք հզօր, այլ Ազգութիւն անզօր. ոչ պերճացելոց փառք իշխանաց ճեռնտուութիւն, այլ միաբանութեան մերոյ անճնանուէր հնազանդութիւն։ Ո՛չ Թաե Ձեզ գործակից, այլ յոյն միայն միայնակ ի Ձեզ զօրացեալ. եւ այսպէս ի հարկաւորեալ հանգամանաց վրիպեալ ժամանակիս, գահակալէք ուրախութեամբ, հովուէք հաւատարմութեամբ, եւ խնամէք դԹովք զորդիս Մօրս Լուսոյ, զրկեալս ի գեղեցիկ կաԹանէ Հոգւոյն, եւ դործէք տքնողական եւ անխոնջ վաստակօք զօդուտն ըստ իրաւանց եւ պարտուց. այս է գործ մեծ, որով առաւելուք զամենեքումբ.դղեղեցիկ պտուղս Հովուական արդեանց, Աստուածարեալ Տէր, քաղցր է մեզ յիշել ի սերկեւնս աւուր, յորում Տէր յերկնից այց արարեալ տառապելոցս շնորհեաց մեզ զԷապետդ մեծ։ Հապա եւ մեք այս ծիր երկնային, Սրբազուման Հայր, պսպղտելով սրտի մտօք այսօր, բազկատարած մաղԹեսցուք առ բարձրեալն Աստուած, զի նորոգեսցէ զսա միշտ ի կենդանութեան ընդ երկայն աւուրս ծաղկեալ Աստուածահաճոյ եւ Ազգասիրական գործովք ի միսիԹարութիւն Մօրս Լուսոյ եւ լրութեան Ազգիս։

Ուրարակիր Գրիգոր ՄատԹէոսեան

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆՔ ԿԱՐԴԱՑՈՒՆ ՃԱՌԸ։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

ԵՒ ՊԱՏՈՒԵԼԻ ՀԱՆԴԻՊԱԿՆԵՔ

Հողաշղթի վրայ լուսաւորեալ ազգերի համեմատաբար յառաջադիմութեանց օր ըստ օրէ ծաղկելու դլխաւոր պատճառն ո՛վ կարող է երկբայել, որ նոցա կարգաւորեալ ուսումնասիրաններն են եղած, որոնք մարդկային ազգի համար մատակարարել են այնպիսի հոգեկան մնունդ, որոնց միջոցով մարդս կապվում է իւր խղճի, իւր ընկերաց եւ իւր Ստեղծողի հետ։

Ո՛վ կարող է կասկածել իւր սրտում որ, եւ այս ուսումնասիրանների ծաղկելն ժամանակի պտուղն է եղել, որոյ ճշմարտութիւնը ահա երեւելի դիտնականներից մինը բարձրաձայն քարոզում է. «Ժամանակի պտուղն կծնանի իւր ժամանակին»

Անհերքելի՛ ճշմարտութիւն . . .

Ժամանակը չէ, որ անՀիւ կոշտ եւ բիրտ ազգերը, որ երբեմն տգիտութեան մէջ ընկղմած լուսաւորութեան ճառագայԹներից հեռի էին, այժմ գիտութեանց աղբիւրներ են դառել։ Ժամանակին չեն պարտական այն լուսաւոր ժողովուրդներն, որոց մտաց մէջ գանազան դարերում այնպիսի ազդաշահ դաղափարներ են ծագել, որոց պտուղն այժմ ամբողջ Եւրոպայ բախտաւորապէս վայելում է։ Ժամանակի անհիւը չէ եղել, որ, նոցա կենաց շրջանը յառաջադէմ քայլերով ապահովել է։

Ո՛հ նախանձելի բախտաւորութիւն . . .

Հայեր, այս լուսաւորեալ դարի մէջ մենք եւս այս շնորհքներից զուրկ չենք մնացել, ոչ. ահա այդ ժամանակի արագ անիւը հասել է եւ մեզ համար. մեր կենաց դարեւոր տխրալի տեսարանն փոխուել է. մենք գտնվում ենք արդէն այնպիսի մտածմանց լայնութեան աստիճանի տակ, որ ամենքեան այժմ ուսման օգուտներն զգալով, քաց են արել իւրեանց հոգւոյ աչքերն անցեալ դարերի պատմութեանց վրայ. զգում են, որ ժողովրդոց յուզմունքներն նոցա ծանծրամած խաւարի մէջ խարխափելով աւերակաց միջից իւրեանց ճակատագիրն որոնելու գլխաւոր պատճառն գիտութիւնն է եղել. եւ վասն որոյ այս տասն եւ իններորդ լուսաւորեալ դարում աշխարհի ամենայն կողմից բարձրածայն քարոզում են, ուսումնարաններ, ուսումնարաններ:

Ո՛հ, քաղցր եւ մխիթարի՛չ ձայն . . .

Համայն ազգի այս ցանկութիւնն լրացնելու համար, ահա շտապում է մեր Վեհափառ Հայրապետն, շնորհիւ Ամենողորմած Կայսեր, այս բարեպատեհ ժամում Սուրբ հոգիս վերայ նոր Ուսումնարանի հիմն դնելու. որով եւ իւր բաղմախոնջ Սուրբ ճակատի վերայ յաւիտենական յիշատակաց արժանի այնպիսի պսակ ընդունեց, որ ամբողջ Հայկայ սերունդը անմոռանալի կերպիւ պիտի փառաւորեն: Վասն զի սորա հիմն նոցա ապագայ որդւոց հաւատը, ազգութիւնը եւ կեանքը պիտի պահպանէ: Սրանիկ նոքա պիտի սպասեն Մեսրովբի, Դաւթի, Գրիգորի եւ Շնորհալւոյ նման արժան հովիւներ. այո, սա պէտք է բոլոր նոցա կենաց զարգացման համար առատ աղբիւրներ, որոց ամէն մի կաթիլը հազարաւոր, բիւրաւոր արգասիք պիտի առաջացնեն: Սա պիտի ծնանի վերջապէս լուսաւոր մոլորակներ հայոց աշխարհի դարեւոր մութն հորիզոնը լուսաւորելու, որոյ տակ այժմ բիւրաւոր քանքարներ տգիտութեան շղթաների ներքն եղած զառն եւ արտասուալի վիճակի են ենթարկուած:

Այլ ինչ աւելի դիւցազնական գործ կարող է սպասել Ձեզ, Վեհափառ Հայրապետ, քան թէ այս անմահացուցիչ եւ ազգաշահ գործն: Այլ ինչ անմոռանալի յիշատակ կարող էք Թողնել աշխարհի վերայ, բացի այս գիտութեանց օրօրոցը, որի մէջ մատաղ մանկունք Հայոց հոգւով սնուած մեծացած, իւրեանց ազգին զրութեան դեղ եւ դարման պիտի լինին: Ձեր այս ազգաշահ գործոյն, Վեհափառ Հայրապետ, բոլոր ժողովուրդը անտարբեր չեն ամենեւին. նոքա արդէն պատրաստ են իւրեանց նիւթաւոր օգնութիւններով նպաստամատոյց լինիլ Ձեզ: Սորա կատարման համար նոքա իւրեանց վերջին ծիգն չեն խնայել եւ չպէտք խնայեն, որտեղից նոքա ժամանակին իւրեանց կենսատու պտուղները պէտք քաղեն :

Զգեցէք արդ, Վեհափառ Տէր, ծգեցէք մի յուսահատութիւն, Ձեր այդ Աստուածարեալ Սուրբ Ոգը, եւ փարատեցէք այս խաւարամած տգիտութեան ծանծր ծրոյը Հայաստանի վերայից. կրկին շնորհեցէք, Տէր, շնորհեցէք նորա իւր նախնեաց հին փառքը, իւր Սուրբ Եկեղեցւոյ շքեղութիւնը առաւելացնող հեզ հոգեւորականներ պարգեւեցէք Ազգին, որոնք նոցա հօտին լինին անխոնջ հովիւներ:

Եւ ահա բոլոր այս ցնծանց փոխարէն, համայն ազգի կողմից մենք մեր խորին շնորհակալութիւններն մատուցանելուց յետոյ, խնդրում ենք Ամենակարող Աստուածանից, որ Ձեր կենաց թելը երկարատեւ անէ. որպէս զի այս դառն աշխատութեամբ ցանած սերմերի պտուղներն վայելէք, ի փառս Աստուծոյ եւ Ազգի:

Կեցցէ՛ մեր Վեհափառ Հայրապետն. կեցցեն նորա խորհուրդներն. կեցցէ՛ եւ մեր քաղցր Հայաստան:

Կ. Ֆոյեաջեան.

ՍԵՂԱՆԱՏԱՆ ԿԱՐԴԱՑՈՒԱԾՔ.

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ

ԵՒ ԲԱԶՄԱԳՈՒՄԱՐ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

«Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք ի սմա».

Ո՛հ ցնծութեան սերկեան աւուրս, յոր ակնբեալ մեր բոլոր
փութաւք յայտնել զլստից բերկրանս Հաւատակաց մերոց Հօր.
Ընդ անցանել վեհ օծութեան Ձեր երկամեան տարեդարձ
Շնորհօք Հոգւոյն եօթնարփւնի ի հովուութիւն Հայկազանց:

Տաճարք Հայոց և առաւել մինչ մայրս մեր Էջմիածին
Այլ ի խորին սուգ դառնութեան զամ մի ողջոյն լալագին.
Նա մինչ վերջինն շունչ հասանէր յերկարաձիգ խոթութեանց,
Ո՞հ անդին Տէր սա մատնացոյց զվհտ տածիչ ի բարձանց։

Հրաւէր ապա առ Ձեզ կարդաց խղճալին մեր Հայաստան,
Վ֊իրայն անթիւ բժշկութիւն Ձեզ միայն առ ապաստան.
Օ՛ի ուր լոյէ անկեալ մահիճ ի խիստ ցաւոց մահացու,
Ո՞չ ապաքէն պէտք են նմա բժիշկ ճարտար, կենսատու։

Եակ և վ֊հտ հայրենասէր, վաղ ի մորմոք ի կսկիծ,
Ընդ բաղդ հայոց որ ի հերուն սևասքօղեալ ի թախիծ,
Ո՛չ անխոյեալ զՆձնդ դնել ըստ քաջ հովուին ոչխարաց,
Յանձն առեալ առնուլ ի ձեռս զղեկ ուղղութեան Հայկազանց։

Ընդէն և անդ չուռ ապարեալ՝ սլացեալ ընդ ծով և ցամաք,
Յաջ և յահեակ դիօշս ի ծածան՝ ի խինդ շարժեալ Հայս համակ,
Փառք առաջնորդ Ձեզ ունելով և ի ձեռին ձիթենի,
Ժամանեցեալ յերկիրն պարարտ, ի ծոց Ա՛օրս մեր Սիօնի։

Ապա այսօ՛ր, այսօ՛ր էր զոր, Տէր զձեռակատ բոլորեալ,
Պահն հայոց, պահ դաբնեայ երկնագունեզ զարդարեալ,
Նա ի ձեռին ընդելուզեալ զիշխանականն գաւազան՝
Նա մեզ Հովիւ օծեալ, լցեալ շնորհք Հոգւոյն եօթնաբիսեան։

Հապա այսօ՛ր էր զոր, յամենուսաէք Հայք ի կազմ՝
Ի թինդ ի խինդ ձօնէին ձեզ սէր հաճութիւն պնդակազմ.
Ելոյր և մեք, վ֊հհափառ Տէր, յերկտարեղարձ Ձեր օծման,
Փութամբ ձօնել զհաւաստիս, սա եղեցի մեզ նշան (վարդեայ փունջն)։

Օ՛ի Ձեօք ի մի նախանձելին յօդեալ ի սէր անտխեղճ,
Հոտ ի մէնջ հեռ և նախանձ, կնիք սրտից մեր անեղծ,
Հանապազօր հաճոյասցին հոտ անուշից մեր բուրմունք,
Յամայր ամօք վայելել խնամ վ֊հտի Ա՛եծի Հայկազունքս։

Երկարասցին թիլք կենաց Ձեր, յոր պէ՛տս ունի Հայաստան.
Յաւարտ ածել զձեռնարկ շքեղ ի փառս ազգիս Երամեան.
Երտահալած մեզ մառախուղ տգիտութեան բաց ի բաց,
Ձեօք ծագեսցի յաշխարհն Հոգւոյ արև կենաց ջահագեղաց։

Հապա եղբարք, համախմբեալք ի մեծ Տօնիս յայս հանդէս՝
Նկայք ցնծալ ի սիրտ հոգւի, գոչել ի մի ձայն կեցցէ՛ս
Հայրդ մեր Գէորգ Կաթուղիկոս, ծածկս հարեալ կրկնակի,
Կեցցէ՛ս՝ կեցցէ՛ս՝ կեցցէ՛ս յաւէրժ, կեցցէ՛ս զամն յոգնակի։

Փիլիպպոս Աբրահամեան Նաւասարդեանց։

ԿՐՕՆԱԿԱՆ

Ի մեծի աւուր Յայտնութեան Քրիստոսի, վերլուծութիւն բանին Եսայեայ, յետ որոյ եւ հաւաքմունք աստուածաշունչ բանիւ Թագաւորին յաւրինեալ ի խորհուրդ Թագաւորացդ որ յերկրի, արագ ուղղմամբ եւ իմաստասիրական սահմանաւ շարադրեալ Վահրամ վարդապետի, յորում աւուր աւծեալ ձեռնադրեցաւ Թագաւորն Հայոց Մեծն Լեւոն

(Շարունակութիւն)

ԹԷ ՈՎ Է ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՒՈՐ: Ընդ վերագոյն այսմ սահմանի, և՝ եւս և քան զոր կարելիք իմանալ և ճառել, ո՞ այլ ոք առաջին Թագաւոր, բայց թէ երանական և փառաւորեալ Սուրբ Երրորդութիւնն, երկրպագեալ ՚ի մի Աստուածութիւն և Տէրութիւն, որ ըստ մարգարէին թէ ,,Թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն երկրի աստուած է՛՛. Առ ՚ի յինքեան բարերարութենէ արարչագործեցոյն իշխէ առհասարակ վերնոցն և ներքնոցն: և զամենեսեան շարժելով միեղէն և պարզ զաւրութեամբն իւրով յիւրաքանչիւր բնութիւն և ՚ի մի միաւորութիւն զնոսին պահեալ սնդէ և զարձուցանէ ՚ի ժողովարարն իւր նախանձառութիւն և յաստուածարար պարզութիւն: Նախ զբազմութեան և զդանդաղանն ըստ փառաց և ըստ պատուոյ զանմարմինն՝ որք են պարզք և անշարադիրք բնութեամբ, և ապա . . .*) ամենայն: Առաջնապէս զորս ՚ի սմա նրբագոյնք են, որպէս լուսաւորացդ կարգ զանազանութեամբ պայծառութեան և ընթացից. և ապա զորս ՚ի հակառակ պատճառաց ՚ի մի միութիւն եղեն գոյացեալ, որպէս զմարդ ի հոգւոյ գոլով և ՚ի մարմնոյ, երկնային և երկրաւոր, մահկանացու և անմահ. ընդ որոց և զամենայն արիւնաւոր կենդանիս զառ ՚ի բազմոյ շարադրեալս, նաև զամենայն ազգի ազգի անշընչից տեսակս, այլև զամենեցուն զգալեացս զպարտս և զսկիզբն, զտարբերս, որոյ սիրելութիւն և հակառակութիւն արարչական հրամանաւ նորին, զամենայն նիւթականս յիւրում հնութեանն անշուշտանելի ունի: Եւ այսպէս ամենակալ թագաւորութեամբն իւրով զամենեսեան կալեալ և սնդեալ ունի յանքակտելի միութիւն և խաղաղութիւն. և ամենակարող զաւրութեամբն իւրով՝ ամենեցուն ըստ իւրաքանչիւր տեսակի կառավարէ և սիրէ, յորս և խնայէ և նախախնամէ ըստ Սողոմոնի թէ՝ "Տիրելդ քո ամենեցուն, խնայել տայ քեզ յամենեսեան": Ասա յանքառ բարերարութենէն իւրոյ և զայս ևս պատիւ շնորհեաց արարածոյ իւրոյ, որպէս ՚ի հրեղինացն դաս կարգեաց յիշ խանական պետութենէն իւրմէ իշխանութիւնս և տէրութիւնս, զաւրութիւնս և պետութիւնս, առ ՚ի նախախնամել զնուաստագոյնսն, և հաղորդեցուցանել զերագոյն լուսափայլութեանցն: Վասնզի են ՚ի նոսա արգասիս խոնարհագոյնք և վեհագոյնք, և նոցին պաշտաւնեայք և այլք, որպէս թէ ասիցէ ոք, անդրանիկք անմարմին էութեանցն և առ դուրս գերագոյն Երրորդութեանն սերտեալք. զորս ոչ միայն յանուանց նոցին է իմանալ, այլև ՚ի գործառնութեանցն, յորժամ ՚ի ձէն մարմնոյ երևեալ աստուածաբանիչն խորհրդազածս առնէին զնոսա աստուածայնոցն, որպէս զարքն երևեալ առ Եզեկիէլիս, ընդ իշխանութեամբ կայեալ

*) Յօրինակին եղծեալ են բառք ինչ:

էր, երևեցան առնն որ զգեցեալ էր զպճղնաւորն, և ունէր զկամարն ընդ մէջ, առ որ ձայն հրամանին Աստուծոյ բացայայտեալ լինէր. "Ընդ, ասէ, զոս ընդ մէջ քաղաքիդ և դիր նշան 'ի ճակատս զղջացելոցն". և ցայսմ առաց. "գնացէք զհետ նորա և կոտորեցէք, ոչ ողոս ձեր կամիջիք, այլ ողոս նա թողուցու 'ի նշանապրելոցն": Եւ զարձեալ այն՝ որ զգեցեալ էր զբազկին փառաց և կայր 'ի վերայ գետոյն զլանազան տեսիլս կերպացուցանելով Դանիէլի մարգարէի. սակայն զԹարգմանութիւն տեսլեանն ոչ ինքն յայտնաբանէր, այլ խոնարհագունի քան զինքն հրամայէր զայս առնել, "Գաբրիէլ, իմացո' զտեսիլդ Դանիէլի": Եւ առ Օ աքարիա. և երևեալն որ ունէր 'ի ձեռին զձող չափոյն և

լար շինութեանն 'ի վճհադունիցն գոլով հրեշտակական դասուց, և (՚ի) հրամանն Օ աքարիայ պատասխանէր, թէ՝ "Երթամ չափել զԵրուսաղէմ": Եւ ոչ ևս զկատարելագոյն հասոյց մարգարէին զպատասխանին, վասզգոյն համարել զնա իւրում խաւսակցութեան, մինչև այլ հրեշտակ եկն ընդ առաջ նորա իբրև զպատասուղ իւր, առ որ հրամայեաց, ''Ընթա՛, ասէ, և խաւսեսց ընդ երիտասարդին ընդ այնմիկ թէ՝ պտղալից բնակեսցէ Երուսաղէմ 'ի բազմութենէ մարդկան և անասնոց": Եւ յայտնէր, թէ՝ "Զգեաց քեզոք մի զձեռն, և առ հուր և եա 'ի ձեռն այլոց, և նա ցանեաց 'ի վերայ քաղաքին": Եւ 'ի Դանիէլն՝ ''Եղ հրաման յառաջնոյ իշխանէն": Եւ այսոքիկ զիշխանոյ և զիշխեցելոց նշանակեն: Այլ տես դդուշութիւնն գոյց, զի ոչ երբէք ընտա թագաւորս կոչէ, այլ զիշխանս և զպաշտպաս զաւրացն, և պետութիւնս, և պաւրութիւնս, նուաճեալ ընդ հլաւր թագաւորութեամբ, միայնոյ և առաջին թագաւորին: Օ աքիայ ասացելոցս բիր ըստ երրորդ խոստմանն մերում տեսցուք, թէ յորմէ՞ հետէ, կամ զկնէ՞ր 'ի մարդիկ սկսաւ թագաւորութիւնն:

ՍԿԻԶԲՆ ՄԱՐԴԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ:

Ի սկիզբն մարդկութեանս ընդհեցաւ նմա այս պատիւ. զի արար Աստուած զմարդն 'ի պատկեր իւր. «Ըստ պատկերի Աստուծոյ արար զնա. և աւրհնեալ զնա, ասաց, իշխեցէ՛ք ձկանց ծովու և թռչնոց և անասնոց, ամենայնի որ 'ի վերայ երկրի»: Եւ այսպէս թագաւոր կացոյց նա երևելի արարածոցս. թագաւորութեամբ իւրով հնազանդեալ, զորմէ Դաւիթ ձառէ. "Փառաւք և պատուով պսակեցեր զնա, և զամենայն ինչ հնազանդ արարեալ 'ի ներքոյ ոտից նորա". այլ քանզի նա 'ի պատուի էր և ոչ իմացաւ. անհնազանդ եղեալ Բարձրին իւրոյ, անկաւ ընդ հնազանդութեամբ որոյ իշխէրն, զորս և պաշտեաց իսկ զարարածս և ոչ զԱրարիչն. և մարմին լինելովն զրկեցաւ 'ի շնորհաց հոգւոյն, պաշտաւնեայ եղեալ մեղացն, ծառայեաց նոցին, ըստ Տեառն մերոյ հրամանին, թէ "Ով առնէ զմեղս, ծառայ է մեղաց". և Պաւղոսի, ասելով եթէ՝ "Մինչ առնէիք ընդ մեղս, ծառայէիք մեղացն". որով և անկաւ մեղսացեալն ընդ մահու թագաւորութեամբ: Եւ յառաջանալով ժամանակին, թէպէտ աղդ մարդկան իշխէին զգալեացս ամենայնի, սակայն ոչ որպէս 'ի սկզբանն պարգևեցաւ նոցին, այլ դաւեալք և դաւաճանեալք 'ի հնազանդելոցն, և 'ի վեր և 'ի վայր ամենայնն խառնակեալք: Վասն որոյ յորս ինաց կայծակին բարեպաշտութեան, թէպէտ սիրեցին աղգաց և ժողովրդոց, ոչ երբէք թագաւորական անուամբ բարգաւաճեալ պանծային, այլ զանձինս 'ի չափոյ ունէին, որպէս Աբրաամ, և որ յառաջ քան զնա նահա-

պետքն, Նոյ, Ենովք, Սէթ և Ենովս. իսկ այլք ոմանք՝ յաղագս կուրութեան՝ որ էր ի նոսա, իշխեցին զինքեանս թագաւորս կոչել, յաղագս բառնալոյն ի վերայ համաղգեացն, որպէս հակայնին ունի բան. զի միաբանեալք յաշտարակաշինութեանդ, հակառակ ամբաւաղալի կարողութեանն Աստուծոյ, կանգնէին զամբարտաւանութեան ամբարտակն: Իսկ յորժամ հզաւր ձեռամբ բարձրելոյն Աստուծոյ կործանեցաւ բուրգն բարձրաբերձ...*) այլ (այլ) զարամբ եկեալ նոքա, հակառակէին տիրել: Ըստ որում բռնացեալ տիտանեանն Ռհլ, որ նա ինքն է՝ Նեբրովթ, կանգնեաց իւր ձեռն և իշխեաց ի վերայ այլոցն. և որ թագաւորել սասցաւ, և թէ եղև սկիզբն թագաւորութեան նորա Բաբելոն: Եւ Որեդ, Ենքաղ և Քաղանէ, որպէս ասէ Մովսէս մարգարէ. "Յերկրէ յայնմանէ եկ Ասուր և շինեաց զՆինուէ". յորմէ ցեղեալք թագաւորք ասորեստանեայց, Նինոս և Նինուաս, որ և Քամէս մինչև ի Քակղեթբաղասար, և ի Սաղմանասար, և ի Փ... և ի Սենեքդրիմ, և ի սոցունց տիրեալ Քաղդէացիք ի Նամրով քդաք բաղդան որդի Քաղդանայ, և անտի մինչև ի Նաբուզոդոնոսոր և ի Քաղդասար, յորմէ բարձեալ թագաւորութիւն նոցա, բաժանեալ տուաւ Մարաց և Պարսից. յորոց տիրեաց առաջին Դարեհ որդի Ասշուրայ, ի զաւակէ Մարաց և Ափրոսի Պարսից ածեալն, որ բռնակալեալ Բայկինն զարմի: Որ յետ սպանանելոյն զՌհլ, տիրեալ հինսիսային կողմանն և ամենայն արևելից, և ապա սպառեալ յաւուրսն Ասշակայ ի Տիրանայ (ի Տիգրանայ), նուաճեցան ընդ նորա

*) Այսպէս ի տեղիս տեղիս բառք ինչ անվերծանելիք մանաւանդ եւ մաշեալք դոլով, կէտանշանս եղեալ անդստք.

յին իշխանութեամբ, ընդ Պարսից՝ մինչև յԱրեհ և Ելամայս (Ելամացիս) և Կամբիւսոս և Քսերքսէս, և Դարեհ վերջին, զոր քակեաց Ազեքսանդր Մակեդոնացի: Կացին և ի հոլով կողմանս և տեղիս. և բռնակալութ պիտակապէս կոչեալք թագաւորք յոլովք և անթիւք, զորոց լռելի է զանուանսն, իբրև զարանց յուսացելոց ի զարմանալի բազկի իւրեանց, որք խլեցան (ի) յարկացն Աստուծոյ և յերկրէ կենդանեացն: Բայց ազգն աստուածածանաւթք՝ Ելբրահամ և Իսահակ, և մեծն Իսրայէլ նահապետք եղեալ իշխեցին ազգին իւրեանց բազմաց: Ծագաւոր խոստովանեալ իւրեանց զՇեմարիա Թագաւորն Աստուած, որպէս յայս առնէ զայս Մովսէս յայտգաբանելն զԱդամայեցիսն, ասէ, "այս են թագաւորք որ թագաւորեցին յԵդոմ, մինչդեռ ոչ էր թագաւոր յԻսրայէլ: Եւ այլք ժանտ և ապականեալք, այնպէս աւասլեցին զայս մեծագոյն պատիւ, մինչ զի որ տիրէր միոյ քաղաքի, և փոքրագոյն տեղւոյն, թագաւոր զինքն կոչէր, որպէս հինգ թագաւորքն հինգ քաղաքացն Սոդոմայ, որք մտոեան ընդ Դոդողոմոմորեանսն, զորս վանեաց Ելբրահամ: Եւ որչափ թագաւորք կործանեցան ի Մովսէսէ, որ տիրեաց վեցհարիւրհազար արանց ի քսան ամէն ի վեր մինչև ցվաթսնամեանսն թուեալ, թող զոր այլ ևս աւելիքն էին, և ոչ երբէք հպարտացաւ: Վասն որոյ կամ թագաւորութեան շուք անձին ըղձացաւ. վասն որոյ ի Տեառնէ աստուած կարգեցաւ Փալատնի: Էր իւր առ Յեսու, որ նոյն ժողովրդեանն խոնարհաբար առաջնորդէր, բազում գոցես և անթիւ անուանեալ թագաւորք կոտորեալք ի նմանէ, որպէս գիրն յայտնէ, զթագաւորն Երիքովայ և զթագաւորն Գաեայ, որ և զԱդոնիբեզեկ թագա

ւոր ըմբռնեալ, կատարեաց զնորա զգաս և զձեռս. և նա ասաց. "Դաւթանաստուն թագաւորքն Յայրակոտոյք ոտիւք և ձեռաւք ուտէին ի սեղան իմ, արդ՝ որպէս ալարկի, եղև ինձ։։ Յակ ապէն և ժողովուրդն Աստուծոյ թէպէտ յամենայն տեսակս մեղայ խոտորէին, այլ յայսմիկ առաւել և զղջաշնային, Աստուծոյ միայնոյ շնորհելով զթագաւորութիւնն և զընշխանութիւնն, ինքեանք հովուելով ժողովրդեանն.որպէս Յեհութայէ յոյժամ ասացին ցնա որպիքն Իսրայէլի, թէ՝ "Նշխեա մեզ գու և որպիք քո". նա պատասխանի ետ և ասէ. "Ո՛չ ինշխեսցից ձեզ ես և որպի իմ, այլ ինշխեսցէ ձեզ Տէր Աստուած". վասն որոյ ախորժելի էր այս աստուծոյ և հաճեալ էր ընդ սոյն։ Վասնզի համազաւր էր մտածութիւնս այս սկզբնաւորական պատուոյ թագաւորութեանն՝ զոր շնորհեաց մարդոյն՝ սիրել ապաշածոյ և լինել ի նեղոյ թագաւորութեան Աստուծոյ. և զնա միայն ճանաչել Թագաւոր։

(շարունակելի)

ՈՏԱՆԱՒՈՐ ԲԱՐԵՊԱՇՏԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՅՈՑ

ՀԵԹՄՈՅ Բ.

Որ ծառայեալս եմ բիւր ախտից,
Կապեալ տոհմէ չար շղթայից։
Ած ի մեղաց զոլով տիրեալ,
Եւ ներհակաց ներքոյ անկեալ։
Յիս յարծակմունքն անասնական
Ինշխեն մտացըս բանական։
Եւ ըստ նեխեալ վերեղմանին,
Բըռով արտաքոյըս իմ պաճուճին։
Հեթում անուամբ լիկ Թագաւոր,
Ներքոյ աղբատ եւ պարտաւոր։
Գանզի կոչիմ իշխան Հայոց,
Բայց ես իշխիմ յախտից խմոց։

Հոգոյս ցաւոց զեղ յարակայ,
Զայն հեծութեան զդիրս այս ստացայ.
Ինձ ողբալոյ լինել սատար,
Զուլիս խթիչ միշտ անդադար։
Ընդոստուցիչ Թմբրեալս ոգւոյ,
Իբրու խրթնան հեղգ անասնոյ։
Կամ հեղեղաւ ընկղմելոյ,
Ձեղ ի ցամաք զձեռն իւր ձգելոյ։
Ստացայ անկեալս ես չարաչար,
Կամաւք ի սուգ անմխիթար։
Պատճառ սովին զԱստուած յիշել,
Եւ ընդ Դաւթի ուրախ լինել։
Սա եւ յապայս գոլ յիշատակ,
Ինձ եւ իմոյն առհասարակ։
Եւ ի լինել պատճառ բարեաց,
Զեզ աղաւթից պնորապղաց։
Որոյ զրուխիւնս աւարտեսաւ,
Մինչ մեր ամացըս թիւ լցաւ։
Եաւթն հարիւր ընդ քառասնի
Եւ այլ չորից Հայոց Թուի։
Յորում ի սոյն ժամանակի,
Պէս պէս տեսաք գործ յիշելի։
Զոր ի նախնի սկսեալ սկզբանց,
Համառաւտեմք ծերոց անծանց։
Մերոյ տոհմիս որ Հայկազնի,
Իշխանութիւնն այն մեծ նախնի։
Ի յայլազգեաց ստրկացեալ,
Եւ բուն գաւառն իսպառ քանդեալ։
Յայն հեղեղէ Ռոբէն զերծեալ,
Որ ի Գագկայն գնրմէ սերեալ։
Իբրու զտապալանն զայն զՆոյն,
Եբաց զերկիրս այս մեր տոհմի։
Սա զԿոստանդին ծնաւ որդի,
Զհայր Թորոսի եւ Լեոնի։
Եւ Հայր զորդի փոխանորդեալ,
Յետ Կոստանդեայ Թորոս տիրեալ։
Ապա Լեոն պայազատէ,
Ա յն որ երեք որդաւք ծաղկէ։
Գանգի Թորոս եւ Ստէֆանէ,
Ընդ Մլեհի ծնան ի նմանէ։
Յետ տիրելոյ միմեանց զկնի
Ծնաւ Ստէֆանէ երկու որդի։
ԶՌոբէն երէց, որ նախ տիրեաց,
Ապա զԼէոն որ յաջորդեաց։

Սա զխափանեալ Թադն նախնի
Նոր նորոգեաց մերոյ Աղգի։
Որպէս Պարոյրն, որ զրուատի,
Թագաւորեաց քաջս այս արի։
Զապէլ դշխոյ դուստրը սորա,
Զուգեալ տիրեաց զկնի նորա։
Սա արքային Հեթմոյ լծեալ.
Զկէսն արքայ հայրն իմ ծընեալ
Որ վասն Աղգիս մեր եւ երկրի,
Զանճն իւր դնելով, չոքաւ զերի։
Իսրայէլի զոյգ պատուեցաւ,
Յեգիպտոսէ Տէրամբ զարծաւ,
Ի բազմահոյլ ծփանս ալեաց,
Յորում աշխարհ կայր յայլազգեաց։
Եւ մանաւանդ ի զոռոզէն,
Յեգիպտացւոց բռնաւորէն։
Որ շուրջ զմեաւք զրացեաց տիրեաց,
Եւ զԱնտիոք մեծն աւերեաց։
Զբազում ամրոցս ըմբռնելով,
Եւ զքրիստոնեայս կոտորելով։
Որ եւ յաշխարհ մեր արշաւէր,
Երիցս անգամ զայս դուն գործէր։
Սակայն պահել հայրն իմ ջանաց,
ԶԱզգս եւ զերկիր յիս փոխանցեաց։
Իսկ առ ինեւ յանախեցին,
Մեծ արհաւիրք երկիւղագին։
Չի թշնամիքն զաւրացեալ,
Եւ Տրապաւեայ նախկին տիրեալ։
Եղեւ խաւար մեզ անհնարին,
Անմխիթար սուգ ցաւագին.
Քանզի առին զքաղաքն Ակքա,
Եւ զբոլորսն որ ընդ նմա։
Տեսին Թէ չէ ոք աւգնական,
Եւ ոչ ինքեանց ինչ ներհական։
Չի յորս էաք մեք ապաստան,
Աղգ նետաղացքն հեղդացան։
Զայս առաւել յոխորտացեալ,
Չմեզ որսային զաղանացեալ։
Որք զաւրս անթիւ գումարեցին,
Զնջել զմեզ ամենեւին։
Որպէս առիւծ մռնչելով,
Զմեզ յորովայնս համարելով։
Չի այն գթած Տէրն այց առնէր,
ԶԱզգս եւ զգաւառ հրաշիւք փրկէր։
Եւ այսորիկ միշնորդ լինէր,
Որ մեր գթած Հայսահայրն էր։
Գորովաբար մեզ վշտակցեալ,
Գրիգորիոս սուրբն երանեալ։
Որ վասն մեր կրեաց նախկին
Զկիրս տանջանացն եւ զվիրապին։
Ա՛յժմ ըզմեղայ մեր պատուհաս,
Ըզգան խրատուն արժանահաս։
Ի բաց ի մէնջ առ զարծուցեալ,
Յինքն եւ յԱթոռն իւր ընկալեալ։
Հովիւն եղ զանճն ընդ ոչխարաց,
Մատնեալ զոսկերս իւր նշխարաց.
Քանզի զոռոզն այն խոտորէր,
Եւ զղեակ հաւրն պաշարէր։
Ասեմ ըզկլայն Հռոմայական,
Չհայրապետաց մեր նստարան։
Չոր եւ յիշելն է ողբալի,
Աղէտ կսկիծ ճառ զողալի։
Քանզի տիրեալ ի սուր մաշէր,
Ողորմելի զերիս վարէր։
Սա Բուզարդան նոր կատաղէր,
Քանզի զՏաճարն հրդեհէր։
Չէայրապետն սուրբ զըզվէր,
Չսրբութեան Գահն զերէր։
Որում եւ Թաթ Անջոյն յայտնէր,
Ընդ Բաղդասար զնա տարաղրէր։
Մինչդեռ հարճիւքն իւրովք լրբէր,
Պղծել զանօթն այն որ սուրբ էր։
Քանզի զփոխն էառ անծին,
Որպէս զերոզք տապանակին։
Եւ այժմ կան զեռ հարուածեալ
Անծամբք յանծինըս բաժանեալ։
Իսկ մեք շնորհիւ պահեալ եղաք,
Որպէս ճնճղուկք յորսոյ զերծաք։
Չի որոգայթքն փշրեցաւ,
Որով օրհնեմք ըզգուն անբաւ։
Պատմեմ եւ այլ ինչ յիշելի,
Ի մերս եղեալ ժամանակի։
Պատմել որդւոց Ձեր ըզկնի,
Ի յաւրինակ ըզգուշալի։
Զքառասուն եւ մի Թուի,
Որ ընդ եաւթեանցն է հարիւրի։
Եղեւ ոմանց յամառութիւն,
Ի սուրբ Զատկէն մոլորութիւն։

Որք եւ ամաւթ չհամարէին,
Զի ընդ Նեստորսըն դասէին։
Եւ յընդհանուր Եկեղեցւոյ,
Պատառէին յախտ հերձուածոյ։
Ֆանղի զվեց ապրիէլին, (ապրիլին)
Որ ճշմարիտ էր աւր Զատկին.
Ի բաց Թողուլ բաջադէին,
Զերեքտասան աւրն ընտրէին։
Իսկ մեք զուղիղն դատեցաք,
Լինիլ ժողով յաւժարեցաք։
Ֆննել ըզդիրս աղաչեցաք,
Եւ զոր ստուգի յանծին կալաք։
Յայնժամ եկեալ ի միասին,
Հանուր լրմամբ Եկեղեցին։
ԶԱստուածաշունչ գիրս քննեցին,
Զբանըս սուրբ հարցն ի մէջ ածին։
Եւ անդստին ճշդրտեցաւ,
Արդարութիւն խնդրոյն ցուցաւ։
Որով հրաման կանոնեցաւ,
Տաւնել ի վեցն հաւաստեաւ։
Ֆանղի սուրբ գիրըն Մուսիսի,
Չյորեքտասան աւրն լուսնի.
Տաւն ցուցանէ հընոյն Զատկի,
Եւ այս բազմաւք անդ հաստատի։
Իսկ նոր կտակս Աստուածային,
ՉՅիսուս ասէ զալ ի Զատկին։
Եւ անդ խաչեալ յայդ ուրբաթին,
Յարեաւ յետ այնմ ի յերրորդին։
Որով Թէ աւրն հին Զատկի,
Պատահեսցէ կիրակէի։
Զի խաչելոյն աւր հանդիպի,
Փոխի ի միւսն որ զկնի։
Ապա Թէ մէջ շաբաթու գայ,
Հուսկ կիրակէն իւր զտակնայ։
Որպէս կանոնն է Նիկիայ,
Եւ ամենայն հարց ըստ նորա։
Եւ զայս Կիւրեղ ասէ յայտնի,
Ընդ այլ բազմաց հարցըն խմբի։
Զի խաչելոյն աւր Քրիստոսի,
Չորեքտասան դիպաւ լուսնի։
Զայս Դիոնէսիոս պատմէ,
Եւ Եվսեբի քաջ վկայէ։
Եւ միւս կիւրեղ համաձայն է,
Ի վեցտասան գյառնելն ասէ։

Չորեքտասանն էր յայս ամի,
Յաւրն մեծի չորեքշաբթի։
Ուր եւ Հրէից բոլոր խմբի,
Տեսաք առնել զտաւն Զատկի։
Իսկ կիրակէն որ ըզկնի,
Ուի եւ տասանց աւր էր լուսնի։
Գնացեալ ազատ յամենայնի,
Աւր յարութեանն էր ստոյգ Զատկի։
Զայս իմաստնաւք յոյժ քննեցաք,
Ցաստեղագէտսըն քաջ հարցաք։
Ցետոյ զլուսինն աչաւք տեսաք,
Թէեւ զրաւք վաղ հաւատացաք։
Այլ եւ Հրէիւք ճշմարտեցաւ,
Զի հինգ շաբաթըն լրացաւ։
Ի շաբաթ մեծ լրումն եղաւ,
Ուղիղ Զատիկն տաւնեցաւ։
Յորում բոլոր Ազգք որ ի նոյն,
Միաբանեալ եղեն ուղղոյն։
Արդ զպատմեալըս սակաւուք,
Եղբայրք սիրով ընկալարուք։
Եւ զմեզ յիշել մի մոռանայք,
Որք յաղաւթեըն քաղցրանայք։
Եւ մանաւանդ զծնաւղսն զիմ,
Յիշել ով տեսրք, առ ծեզ ժտիմ։
Ընդ արքայ հաւրն իմ Լէոնի,
Չկեռան ղշխոյ մայրն իմ բարի։
Բոլոր նախնեաւք որ զկնի,
Համայն զարմիւք աղգատոհմի։
Մաղթեմ հայցել Տեառն Յիսուսի
Տալ քաւութիւն մերոյն պարտի։
Եւ Չեզ կրկին փոխատրեսցի,
Ողորմութիւնն անդրաւելի։
Զի մեզ եւ ծեզ առատասցի,
Յաւղ վտակաց նորա շնորհի։
Աւրհնել ըզՆա ընդ Հաւրն իւրում
Եւ ընդ Հոգւոյն իւրոյ սրբում։
Միշտ եւ յաւէտ եւ յապառնում,
Չերիսն ի մի բնութեան նոյնում։ (*)

(* Ցիշատակարանս այս թեպետ բանիցս ընծայեալ է ի լոյս ի վերջ Աստուածաշնչոց, այլ հարազատ բնագիր մանաւանդ եւ իմ ճանաչեալ օրինակիս, զոր ունիմ ի մատենադարանի Ս. Աթուոյս առաքելական, իղձ մեծ ազդեաց մեզ հրատարակել միջոցաւ Արարատայ ի վայելս

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Ա՛այս 2· Ըժանապատիւ Սահմանոս վ֊արդապետն Ա՛խիթարեանց Հին֊Նախիջևանայ Յաջորդ կարգեցաւ ի տեղի Յովհաննէս վ֊արդապետի Տէր Յարութիւնեանց, որ արձակուեցաւ յիշեալ պաշտօնէն՝ զննութեան ենթարկուելով։

— 11· Ըստ խնդրանաց և վկայութեան հասարակութեան Հայոց Հին֊Նախիջևանայ, ի բաւական ժամանակաց հետէ քահանայագործութենէ բոլորովին զատարած Կարապետ Օ֊աքարեանց զինեմոլութեան ախտէն ըստ ամենայնի հեռացած լինելով՝ իւր ի սրտէ զղջմամբ և ապաշխարութեամբ, կըրկին Հայոց Նկիւղեցւոյ ծոցը ընդունվեցաւ միանգամայն հրաման ստանալով քահանայութեան պաշտօն կատարելու, բայլ Ս. Պատարագ մատուցանելոյ։

— 21· Ըժանապատիւ Գրիգոր վ֊արդապետն Տէր Սահմանոսեանց Ս· Ընծայս գանձապետ կարգեցաւ, փոխանակ Ըժանապատիւ Նասլի վ֊արդապետի, որ իւր անձնական ախտութեան համար Տփխիս օգափոխութեան գնալու թոյլատուութիւն ստացաւ։

—

Սինոդի Առենապետիր Պ· Սուքիաս Թաղիանոսեանցը յատուկ պաշտօնով միանեայ միջոցաւ գնաց ի Հին֊Նախիջևան։

Ա Զ Գ Ա Ց Ի Ն

ՆԱՄԱԿ ԿՈՒՐՍԻՑ

. . . . Համբաւրութեան «Արարատ» ամսագրոյ.

. . . Այժմ բերկրաւիթ լուր մը կը հաղորդեմ, որ երէկ Արարատայ միջոցաւ հրատարակելու լինիք, կանխապէս շնորհակալութիւնս կընդունիք։ Վաղաքին վարժարանը բաւական թուով աշակերտներ ունի և զբաղոցական տարեդարձին Ս· Լուսաւորչի տօնին ըլլալուն՝ միամեայ շրջանի քննութիւնը ըրած եմք։ Յետ աւարտման Նկիւղեցւոյ ժամը 3-ին սկսեցինք քննութիւնը, ուր հրաւիրեալ էին Հովսէփեանաց երկու վարդապետներ իշխանաքն, Ռուսիոյ վ֊սեմ. Ակինտ պարոն Յովհաննէս Ունձեան իւր թարգմաններով։ Վերականութեան երկրորդ մասի աշակերտաց քննութիւնը սկսաւ առնոյմէ մէկուն կարդացած մէկ ձառով. արդարև գովութեան արժանի էր աշակերտաց յառաջադիմութիւնը որ հայկական ոճերու ունեցած հմտութիւնին աքանչելի կերպով ցուցուցին։ յետոյ 1-ի մասի աշակերտաց քննութիւնն եղաւ՝ որ նոյնպէս կարճ միջոցի մէջ ունեցած յառաջադիմութիւնին աքանչելի է. այս քննութիւնք վե-

---

եւ ի յազուդ հեռաւորութեան բանասիրաց։

Զսոյն գայս յիշատակարան յատկապես յօրինեալ եւ գրեալ է բարեպատշ եւ ուսումնասէր բազաւորն Հայոց Հեթում Բ. ի վերջ Աստուածաշնչի միոյ ընտիր օրինակի, զոր յիւր ի վայելս գաղափարեալ է յընտրելագոյն օրինակէ Սեբաստիոյ աւուն ծերունի ոմն, ի վերայ մագաղաթի, բոլորագիր, գեղանի գրութեամբ, ի թուին Հայոց ՉԽԴ. եւ ի փրկչական 1295։

Ցակիզբն սորին (յիշատակարանի) գոյ այսպիսի խորագիր, ,,ԱՒՐՀՆՈՒԹԻՒՆ ՈՐ ԿԱՐԻԱՑ, ԳՈՎՈՒԹԻՒՆ ՈՐ ԼՍԷ, ՓԱՌՔ ՏՈՒԱԻՂԻՆ, ԵՒ ՑԻՇԱՏԱԿ ԳՐՉԻՍ։ ԱՄԵՆ։ ԹՈՒԱԿ. Չ֊Ի. ԳՐԵՑԱԻ։ Զոր երեւի գրեալ յիշատակեալդ Սեբաստացոյն։ Իսկ ոսացաւոր յիշատակարանիս ոսկեգօծ գլխատառքն միայն ոչ են իմ֊ինձ֊ածեալք բազաւորին. այլ Սեբաստացոյն գրչին։

Ցաւարս սորին է եւ տեղի խառանկիւնացածեւ բազաւորական կնիոյ, զոր աւագ. անհաւատս իմն օսար ձեռք հատեալ բարձեալ է ի բաց։

Ս.

զնցիկ ձառերով և երդերով երբեմն երբեմն կընդմիջէին. ատոնք երեք ժամէն աւելի տևեցին. յետոյ Հովիսիմեան Օրիորդաց ղըպրոցի աշակերտուհիք իրենց ընթերցանութեան և պրավարժութեան քննութիւնները տուին: Յետոյ երբ մանր ուսմունք անուանբ Պրիստոնեական Վարդապետութեան հարց պատասխաններն սկսան (զոր ամբողջ բերան բռած էին), Տիկնոջ Մուրհասպըճը իր ամբողջ ժողովականներով, այսինքն՝ Պատր Մուհասիպճի և վճռուհք քաղաքին և պրափիլք կառավարութեան ձիշդ այս միջոցին հասան (ցփաշայի օր յառաջ հրաւիրած էի թաքրիրով). ուր յետ հարց պատասխանուց, տաճկերէն ձառ մը և քանի մը երգ ալ կարդացուելով Հանդէսը դոցեցինք ատենաբանութեամբ մը: Սիւրակէ օրը տեսնելով որ օրիորդաց մայրեր ըզկուեցան այս գիշերիկ հանդիսին, կինի Ս. պատարդի բերինք օրիորդներըը և ժողովուրդն ալ ամբողջ ներկայ էր, երկու սեռէ ալ մեծ և փոքր. ու ամբողջ մանր ուսմունքը բերան քաղեցին: Ընդ հքեղութիւնը քաղաքիս նկատմամբ խիստ շատ է և այս առաջին անգամն է որ այսպիսի հանդէս մը տեղի ունեցաւ Պարսից մէջ. մեծ յոյս ունինք որ տոքա կրթեալ հայրեր և մայրեր պիտի ըլլան Պարսից ապագայի համար. օտարազգիք նախանձեցան. տիկնոջ Հայկազանութեան դասատուն Բաղիշեցի Սողոմոնեան Գրիդոր պատուելին է, որ անխոնջ կաշխատի. և երաժշտութեան դասատուն նորին աշակերտ պարոն Մարկոն է: Ըմնռանանք որ Թուրքաստանութեան դասախօսութիւն ունինք և աշխարհագրութեան, բայց դեռահաս են ատոնց մէջ. այսչափ բաւական կը համարիմ:

***

12 Ապրիլի 1869 ամի

ՇԱՄԱԽԻՈՅ ՆՈՐԱՀԱՍ ԴՊՐՈՑՆ ԵՒ ՆՈՐԸՆՏԻՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԱՍ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ:

Շամախւոյ վիճակին Հոգևոր Տեսուչ Գերապատիւ Ս. Ընդրէաս Եպիսկոպոս՝ Բազում նորակառոյց եկեղեցւոյ օծման առթիւ՝ ազգս ատենաբանութեամբք և յորդորանօք սեղոյն Հայազգի ժողովրդեան ուսումնասիրական զգայմունքները կըփութայ շարժել, հետևաբար անդ ծխական դպրոց կը բանայ Հայ մանկտւոյն լուսաւորութեան և կրթութեան համար. և նորա բարւոք ու արդիւնաւոր ղարգացման աղագաւ, ժողովըրդեան ընտրութեամբ՝ եռամեայ ժամանակով Հոգաբարձու կը կարգէ հետևեալ 6 անձինք՝ բարեկրօն Թադէոս աւագ քահանայն Բուզաղեանց, պատուոյ՝ երիցկոհան Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ՝ Ջաւադ Մէլքեանց, Գրիդոր Հայվազեանց, Յովհաննէս Պօղոսեանց, Գրիդոր Թումայեանց, Յակովբ Ալլիսեանց: Նաև յիշեալ Դպրոցին ինդատաս՝ արքունի գանձապանի ծառայող Հայք իւրաքանչիւր տարի երկուհարիւր արծաթի ռուբլի կը խոստանան նուիրել. և երիցկոհան Պ. Ջաւադն Մելքումեան Մելքեանց հինդ սենեակներէ բաղկացեալ իւր սեպհական տունը երկամեայ ժամանակով Դպրոցին կը յատկացնէ առանց վարձու՝ միայն նոր դպրոցին շինուիլը եկեղեցւոյ բակին մէջ:

Վեհափառ Կաթողիկոսը Հայրապետական կոնդակներով օրհնելով և գովելով Բազում Հայոց, արքունի գանձապանի Հայ ծառայողաց և Պ. Ջաւադայ Մելքեանց աղքատասիրական և ուսումնասիրական եռանդները և բարեպաշտ նուէրները, բարեհաճեցաւ հաստատել նորընտիր հոգաբարձուքը:

«Իզմիրի Ընշալոյս Ընթերցատեան յարգոյ լրագրին մէջ հետեւեալը կը կարդանք։

«Հաւատարիմ աղբիւրէ մի կիմանանք թէ անցեալները Գահիրէի Ընդհանուր հիւանդատոսը 40 լերայի արժողութեամբ հագուստ և 1000 Սպանիոյ թալէռ պատրաստ դրամ յատուկ սուրհանդակով մի յուղարկել է՝ի Հապէշստան առ Գեր-Տ-Մահակ արքեպիսկոպոսն։ Հազուստը՝ ն- Սրբազնութեան և իւր ընկերացը համար է եղեր. խակ հաղար թալէռը՝ հարկաւոր եղած երեւելի անձանց ընծայ տալու համար, որպէս զի անոնց օգնութեամբը կարող ըլլան վերադառնալու»։

Մասիս օրաթերթ, թիւ 358։

—

«Ընշալոյս Ընթերցատեան պատուական լրագրին 857 թուոյն մէջ հետեւեալը կը կարդանք։

«Հնդկաստանէն կը ծանուցանեն մեզ, թէ Ս. Ներսիսեան վարժարանի նուիրակ Երժ. Տ. Գաբրէս ծայրագոյն վարդապետը յաջողեր է Գալկաթայի անտեսական վարչութենէն (ամմինիսթրաթօր) սառնալու՝ հանգուցեալ Մանուկեան Գէորգին շատ տարիներէ՝ի վեր յանուն Ս. Յակոբայ աթոռոյն կատակաւ թող տրուած հրիտակին տոկոսը, որ 14,900 ռուփի է եղեր. այսինքն 1490 անգղեական լիրաւ։

Նոյն, թիւ 362։

—

Հիւրակ գաւառի Խայենդուր գիւղէն տիրացու Մելքոնտո ուրարակիր Ս. Էրսէնեանցի նամակէն հետեւեալ բովանդակութիւնը կը քաղենք.

Յիշեալ գեղջ ուսումնասէր Մելքիսեդեկ քահանայ Մանուկեան, որ՝ առիթով վանից դպրոցը ուսումն առած լինելով, 1862 թուականին քահանայ ձեռնադրուելէն՝ի վեր իւր անխոնջ ջանքը ոչ միայն իւր խնամոյ յանձնուած հայ մանկտւոյն հայելէն ընթերցանութիւն և այլն ուսուցանելու չը խնայեր, այլ և տեսնելով յաւօք սրտի՝ եկեղեցւոյ շէնքին աւերակ վիճակը, գեղեցիկ եռանդով ոգևորուած, ՝ոգևոր Ուշեանութեան Թոյլտվութեամբ և հրամանաւ՝ կը ձեռնարկէ՝ի հիմանէ նոր Եկեղեցւոյ շինութեան, զոր իւր ժողովրդին և շրջակայ կողմանց ՝սկզագանց տրօք և օգնականութեամբ ևս սեպհական արդեամբք և անձնանուէր աշխատութեամբք յաջողեցաւ յաւարտ ածել. որոյ ս. օծման հանդէսը անցեալ դեկտեմբեր ամսոյ 5-ին 1868 թուականի կատարեցաւ ա՛ եհ. Կաթողիկոսի կողմանէ նշանակուած մի եպիսկոպոսի ձեռքով։

Տիրացու նամակագիրը կը յայտնէ նաև թէ, յիշեալ բարեկրօն քահանային տակաւին մեծ հոգս կը կրէ եկեղեցւոյ նեղքին պիտոյից թերութիւնները լրացնելու. մանաւանդ՝ օր աւուր առաւել մեծ ձիգ կը ղոհէ գիւղիս աղքատիկ դպրոցին՝ի զարգացումն և՝ի յառաջադիմութիւն՝ ՝այ մանկանց լուսաւորութեան համար։

—

Յաջորդ թուով ն-Նախիջևանայ Ազգասիրական Ընկերութեան առ ա՛ եհ. Կաթողիկոսն մատուցած հաշիւը կը փութամք հրատարակել։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

(Շարունակութիւն*)

Մենք ասացինք, որ դաստիարակութեան նպատակը է մարդուս առնել ուժեղ, խելօք եւ առաքինի։ Գուցէ ասողներ լինին մեզ, որ եթէ դաստիարակութեամբ կարելի է մարդուն այդ գովանի յատկութիւնքը տալ,

(*) Տես նախընթաց համարն.

Էլ ինչ ասել է «բնական ծիրը» կամ «ժառանգականապէս անցումն որակութեան ծնողաց առ որդիս»: Մենք չենք հերքում ամենեւին, որ ծնողաց յատկութիւնքը անցնում են իրանց զաւակացը, բայց այդ չէ ցոյց տալիս, որ եթէ ծնողք ուժեղ են, նոցա զաւակներն եւս ան շ ու շտ ուժեղ կը լինին. եթէ խելօք, խելօք. եթէ առաքինի, առաքինի: Վասն զի աշխարհս մի երկրորդական արգանդ է, որից մարդս հարկադրուած է կրկին ծնանելու, իւր անուան վերայ մի այլ անուն կամ կոչում աւելացնելու: Ծնողք աշխարհին են տալիս մի էակ, համարենք, ուժեղ, առաքինի եւ խելօք լինելու «ընդունակ» եւ ոչ իսկապէս եւ կատարելապէս խելօք, ուժեղ եւ առաքինի: Այս վերջին գործը էակի կեանքի վերայ ազդեցութիւն ունեցող հանգամանքների պաշտօնն է: Ծնողաց որակութիւնը իբրեւ մի սերմ մի հողից ընկնում է մի այլ հող, (այսինքն մի մարմնից մի այլ մարմին), եթէ այս վերջին հողը չունենայ այն բոլոր անհրաժեշտ նիւթերը, որոնք եղել են առաջուան հողի մէջ, նա կը ոչնչանայ, չի աճիլ, չի բեղմնաւորիլ: Ինչպէս նաեւ ծնողք տգէտ, մոլի եւ անզօր լինելով, այդ մի եւ նոյն յատկութեանց տրամադիր են անում իրենց զաւակին. բայց նա կարող էր չենթարկուիլ այդ յատկութեանցը, եթէ ազատ մնար այն հանգամանքներից, որոնք աճեցնում եւ երեւցնում են այդ յատկութիւնքը: Ասել է թէ, ոչ միայն առանց կանոնաւոր դաստիարակութեան (կամ ինքնակրթութեան) մարդս կարող չէ իւր ծնողական բարի յատկութիւնքը պտղաբեր կայուցանել իւր մէջ, այլ նաեւ կանոնաւոր դաստիարակութեամբ կարելի է երեխայի ստոր տրամադրութիւնքը, որ ստացել է իւր ծնողացմէ ժառանգականապէս, ճնշել անհետացնելու չափ եւ նորա բնութիւնը վսեմ յատկութիւնք բեղմնաւորելու ընդունակ կացուցանել: Իսկ որ ինչ կը վերաբերի «ծիրը» ասած բանին, որ իբր թէ առանց ուսման եւ վարժողութեան շնորհք է տրվում մարդու ծրիապէս, դորա սուտ եւ ճշմարիտ լինելը կերեւի, յաջորդ յօդուածիս մէջ: Այժմ խօսինք մարմնոյ եւ նորա զարգացման մասին:

Յայտնի է, որ մարմինը մի ինքնաբոյս բան չէ, այլ յառաջ է գալիս սերմից: Ոչ մի սերմ չկայ, որ աճէ առանց սնունդի: Ինչպէս որ բոյսի աճելու համար հարկաւոր է հող, ջուր, օդ, լոյս եւ այլն, նոյնպէս եւ մարմնոյ աճելու համար հարկաւոր է կերակուր եւ օդ: Եւ այդ իսկ պատճառով մարմնոյ յատկութիւնը ըստ արտաքնոյն եւ ըստ ներքնոյն կախում ունի կերակուրի եւ օդի յատկութիւնից: Ուրիշ անգամ, երբ կը խօսինք առողջապահութեան վերայ, տեղիք կունենանք մանրամասն ցոյց տալու այդ անդադար տարերքների որպիսութիւնը եւ որպիսի ազդեցութիւն ունենալը, բայց առ այժմ բուռ է, եթէ հաստատապէս իմացուի, որ մեր մարմինը ոչ այլ ինչ է, բայց միայն այն կերակուրը, որ մենք ուտում, ծծում կամ խմում ենք, եւ այն օդը, որով մենք շունչ ենք առնում: Այդ երկուսի ընդհատվելուն պէս, կընդհատուի եւ մեր մարմնոյ աճումը, նորա շարժողութիւնը, կեանքը — մենք կը մեռնինք: Մարմնոյ ուժը կախում ունի գլխաւորապէս մկանունքների զարդացումից, ամրութիւնից, իսկ դոցա զարդանալը եւ ամրանալը կախում ունի մարմնամարզութիւնից եւ ֆիզիքական աշխատութիւնից:

Քանի որ աշխարհիս երեսին ոչ ուսումնարան կար եւ ոչ ուսում կամ դիր, այդ ժամանակ մարդոյ դաստիարակութիւնը կայացած էր միակ մարմնավարժութեան մէջ: Գրավարժութիւնը ներս մտնելէն զկնի եւս մարմնավարժութիւնը չընդհատեցաւ հին ազգերի մէջ մինչի քրիստոնէութեան տարածուիլը եւ կռապաշտական սովորութեանց հալածուիլը*):

---

*) «Մարմնավարժական դաստիարակութիւնը ամենհին ազգաց մէջ առաջին եւ ամենակարեւոր դաստիարակութիւնն էր. վազք, լող, ըմբշամարտութիւն, նետաձգութիւն, ձիարշաւ, կառարշաւ եւ որ եւ իցէ մարդկային ուժը զօրացնելու եւ մարմինը ամրացնելու վարժութիւնը առ հասարակ իշխանազանց կրթութիւնն էր: Քրիստոնէական ժամանակը այս մարմնավարժական դաստիարակութիւնը մոռացուեցաւ: Ներկայ դարուս սկզբից Եւրոպացիք սկսան գործ ածել Անգղիոյ, Գաղղիոյ եւ Գերմանիոյ երեւելի դաստիարակախօսաց յորդորմամբ. նախ Անգղիայումը եւ Գերմանիայումը սովորութիւն լինելով, Գաղղիա անցկացաւ եւ այնչափ կատարելագործեցաւ, որ մասնաւոր կրթարաններ հաստատուեցան, որոնց մէջ հաշմանդամ եւ անդամալոյծ անձինք սկսան բժշկուիլ այս կրթութեամբ, երաժշտութիւնը եւս իրանց շարժուածքը միջոց անելով. վերջապէս թէ պատանեկայ եւ թէ աղջկանց վարժարանաց եւ վարժատանց մէջ ընդունելով հաստատուեցաւ այս մարմնավարժութիւնը... Երանի՛ կը լինէր, որ մարմնավարժական դաստիարակութիւնը մեր Հայոց աշխարհին որդոց մէջ եւս մտնէր, որում շատ հարկաւորութիւն ունինք ոչ թէ Եւրոպացոց հետեւելով, այլ մեր նախնեաց դաստիարակութեան ամենամեծ առարկան լինելուն համար: Դիւցազն Վահագնի վիշապներու հետ կռուելը, Ա. Աբշակայ նիզակով կոթողներ ծակելը, Հայկազն Տորքայ ըղունկներով քարեր փորելը եւ Սեաւ ծովին մէջ ահագին քարեր նետելով ալեկոծութիւն անելը, Մեծին

Սպարտացիք իրանց քաղաքի չորս կողմով պարիսպ չէին քաշում Թշնամուց ապահով մնալու համար, վախենալով, Թէ մի գուցէ այդ հանդամանքը ժողովրդի ուժն ու քաջութիւնը նուազեցնէ, այլ աշխատում էին ի ձեռն մարմնավարժութեան իրանց անձը պատրաստել «վահան ամրութեան, որով կարասցեն զամենայն նետս մուխս Թշնամեացն շիջուցանել»։

Որպէս զի մենք առանց ծանրութեան կարողանայինք օգուտ քաղել այս կենսատու պարապմունքից, հարկաւոր է աչքի առջեւ ունենալ յետագայ նկատո-

---

Տրղատայ երեւելի նահատակութիւնները, Վարաղդատայ նետադրութիւնը, վազելը եւ ցաՒկելը, հզօր եւ արի Աշոտ Երկաթին հաստ երկաթեայ զանազանը ծռելը, Հաւնունի Ասլ խարիպ զօրապետին մի սրի հարվածով երկաթէ դռներ կտրելը, Ա. Լեւոնի Ռուբէն որդուոյն Բագրատունիքի մէջ ջրով լիքը մարմարեայ աւազանները իր սաստիկ զօրութեամբ վեր վերցնելով Յունաց կայսեր առաջը դնելը եւ այլն։ Սրանց նման հազար ու մէկ օրինակներ, որ մինչեւ մեր օրերն անգամ տեսնում ենք Հայոց աշխարհիս որդւոց մէջ, ցոյց են տալիս մեր նախնեաց մարմնավարժական դաստիարակութիւն ունենալը»։ (Կռունկ Հայոց Աշխարհին 1860 ամի երես 167)։

Մեզ ոչինչ չէ մնում սորա վերայ բան աւելցնել, բացի ափսոսալուց, որ այս խօսքերքը ահա ինը տարի է որ ասուել են, բայց սորա կատարմանն նշանը ոչ մի տեղ մեր Հայոց Աշխարհին որդոց մէջ չի երեւում. իսկ եթէ որ մեր դիւցազանց քաջագործութիւնը առասպելաբանութիւն կը համարէ, Թող իմանայ, որ մարմնավարժութեամբ մարդիք այնչափ շատ ուժ են ձեռք բերում, որ քաղաքէ քաղաք Թափառելով ցոյց են տալիս իրենց շնորհքը ոչ սակաւ գնով։ Երեսուն քառասուն փութ բան բարձրացնելը, տասը փութանոց բան մի բանի տասնեակ քայլ նետելը շատ հեշտ եւ դիւրին բաներ են նոցա համար։ Իսկ որ ինչ կը վերաբերի ճարպիկութեան, այդ վարժողութեանը մէջ այն աստիճան զարգանում են, որ վարժողութեան զօրութիւնը չիմացողին աչքալափութիւն է համարվում եւ կախարդութիւն եւ չէ կարծում, որ այդ բանը ստուգապէս այդպէս կատարուելիս լինի։ Ի՞նչ է փոկուսնիկների (ձեռնածու) զլխաւոր զբաղմունքն, եթէ ոչ ձեռաց զարմանալի արագաշարժութիւնը, որ այնչափ սաստիկ է որ մեր աչքին չէ երեւում, Թէ երբ եւ ինչպէս արաւ։ Իսկ մենք մեր տգիտութեամբը այդպիսիներին աչքակապ ենք համարում, եւ ամենաչնչին լարախաղացի ճարպիկութիւնը ի վերուստ իջած մի առանձնաշնորհութիւն։

դութիւնը։ Մարդս կարող չէ ծագցնել իւր մէջ այն, ինչ որ այլ եւս չէ Թէ ընդունակութիւն կամ տրամադրութիւն է, այլ շօշափելի մի բան է դառած։ Ըմբիշները, որոնք սովորաբար ուժով են լինում, նորա միշտ որս են փնտրում իրանց ուժին ենԹարկելու համար։ Նորա շատ անգամ բոլորովին աննպատակ ծառերի եւ քարերի հետ են կպչում։ Կանխակալ կարծիքներից եւ կաշկանդող խաւար նախապաշարմունքներից ու ծուռ հասկացողութիւններից ազատուած մի միտք աշխատում է լուծել այնպիսի խնդիրներ, որ իւր կարողութենից շատ բարձր է եւ եԹէ լուծէր էլ, նորան ոչ մի շահ չպիտի լինէր։ Ճարպիկ լարախաղացը մի նոյնպան ոգեւորվում է իւր պարանի վերայ, որքան Ճարտարախօս հռետորը իւր ամբիոնի վերայ, դիւրաՒղայ բանաստեղծը իւր հերոսների նկարագրելումը եւ հանճարաւոր քննագէտը իւր ենԹադրութեանց Ճշմարտութիւնը զրտնելումը եւ ապացուցանելումը. Սորանից պէտք է հետեւցնել, որ ուրեմն եթէ երեխայի սկզբնական կրթութեան ժամանակից սկսած հետզհետէ զարգացնենք նորա մարմնոյ ուժը այնքան, որ այդ նորա մէջ մի շօշափելի բան դառնայ, այնուհետեւ որքան կուզէ շատ լինի նորա մտաւոր պարապմունքը, նա այնու ամենայնիւ իւր սիրելուց չի կամենալ զրկուիլ բնականապէս. մի բան, որ արդէն պահանջմունք է դառել եւ սոխպում է կատարումն, նորանից շուտ չի դադրելի ազատուիլ, մանաւանդ երբ իմացուի, որ այդ պահանջման կատարումը շատ պատուական եւ օգտաւէտ սովորութիւն է։ Բայց մենք բոլորովին սորա հակառակն ենք անում։ Մեր երեխայոց մանուց պատճառ արդելում ենք խաղալ, կպչել, վազվզել, որ շատ բնական են երեխայոց վտանգուն բնութեանը եւ փոխանակ օգուտ քաղելու այս բնատուր ձգտողութիւնից եւ կանոնաւորելու նորան, մենք խլում ենք երեխայի այս յատկութիւնը, նուաճում ենք նորա ուժը, եւ այնուհետեւ առանց մեր ստիպելու էլ նա ինքն է սատում այդ խաղերը, եւ, իբր խելքի գալով, սկսում է նկատել, որ խաղալը եւ ֆիզիքական աշխատութիւնը աղբատ եւ անկիրթ տղայոց գործ է. սկսում է մեծամտուիլ, մի տիրական բնաւորութիւն ստանալ, մինչեւ այն աստիճան, որ իւր ծեռները անգամ էլ չէ ուզում լուանալ, իւր կօշիկները, շորերը սրբել, փողոցից մր աղլուխ բան չէ տուն բերում, չորս փունտ բանի համար մշակ է բռնում՛՛՛ . . . Այսպիսի պատանիք ինչէ կը նմանին վերջը, եթէ մանաւանդ ընկնին այնպիսի կլիմայի տակ, որ առաւել եւս նուաճէր նոցա մարմնոյ ուժը։ Յայտնի բան է, նորա կը դառնային կնամարդիք եւ կը նմանէին այն գիտ-

նականին, որ մենք նկարագրեցինք մեր նախընթաց յօդուածումը։ Եւ այս Թերութիւնը նոցա շատ սակաւ զգալի կը լինի. վասն զի մի բան, Թէ լաւ Թէ վատ, որ սովորութիւն եւ պահանջմունք է դարձած մարդուս բնութեանը, այն է սիրելի իսկ եԹէ ոչ, չէ սիրելի։ Նորա զրկվում են այնպիսի բանից, որ չեն ունեցել. բայց եԹէ ունեցած լինէին եւ կորցրած, այդ ժամանակ առաւել կափսոսային։

Կասկած չկայ, որ խելքով առաւել լաւ կապրի մարդս, քան Թէ անխելք. բայց կարծել որ խելքով ապրել կը նշանակէ մի միայն խելքին զօր տալ, բան զրել, բան ասել, եւ այլն. բայց իւր կօշիկները չսըրբել, իւր ձեռին ջուր չածել, չիմանալ լող, ծիարշաւ, ըմբշամարտութիւն, որսորդութիւն, մի որ եւ իցէ արհեստ եւ այդ բոլորը ծառայից եւ անխելք մարդոց գործ համարել, այդ բոլորովին անխելքութեան եղրակացութիւն է։ Խելքը չի որոշում այդ պահանջմունքների համար առանձին առանձին քաստեր, այլ բոլոր մարդոց համար, առանց բացառութեան, բնական է համարում նոցա իւրաքանչիւր բաբելաւութեանը համար. կարդի եւ կանոնի տակ է ձգում այդ պահանջմունքները եւ նոցա կատարելու դիւրին եւ անվնաս կերպն է սորվեցնում։ Խելքը չէ ասում, որ մեզ ուտել պէտք չէ, այլ ցոյց է տալիս, Թէ որ կերակուրը աւելի սընձնդասար է եւ որը սակաւ, որը օգտաւէտ եւ որը վնասակար, որը հարկաւոր երեխային եւ որը աշխատաւորին, որ կլիմայում ինչ տեսակ կերակուրը աւելի առողջարար է եւ որը ընդհակառակն եւ այլն։ ԵԹէ այս ճշմարտութիւնը ընդունում ենք, դիտենք, որ առանց կերակուրի չենք ապրիլ, մեռածի հաշվում չենք միԹէ, երբ զուրկ ենք մեր պլխաւոր պէնքից, որ է մեր ուժը. ուժը, որ ամուսնութեան գլխաւոր պայմանն է, գործունէութեան միակ գործին է, մարդկային ստոր կիրքերը նուաճող միակ սանձն է, աշխարհային փորձանքներից միակ աղատիչն է, այրութեան եւ հերոսական միակ զրաշմն է . . . . . Ո՛ր երեւելի գիւցազնը եւ «մեծ» տիտղոսով պատուած անձն կարող էք վերցընել, որ առանց ուժեղութեան կարողացած լինի հասնել այդ պատուին, եւ առանց մարմնամարզութեան կարողացած լինի հասնել ուժեղութեան։ Մեծն Ալէքսանդր, մեծն Փիլիպիկոս (Ֆիլիպիկ), մեծն Նապօլեօն, մեծն Պետրոս եւ այլ շատ մեծանձինք ինչով են կարողացել հասնել այս պատուին եւ անմահութեանը, եԹէ ոչ իրանց ուժեղութեան շնորհքով, որ սերտ կապակից է եղել նոցա մեծահոգութեան եւ հանճարոյ հետ։ Ի՞նչն էր ստիպում Ռուսաց մեծ կայսրին Հոլլանդիայում իւր օրական հացը հայԹհայԹել այն խորհրդով, որ առաւել ճշդիւ կարողանար իւր նպատակին հասնել, այսինքն լաւ սովորել նաւաշինութեան արհեստը»։ Խրիւ է, վրեժխնդրութիւնը, նախանձը, պատուասիրութիւնը, ինչպէս նաեւ հայրենասիրութիւնը, ազգասիրութիւնը եւ այլ այսպիսի վսեմ եւ ստոր կիրքերը երբեմն դրդում են մարդու մեծամեծ գործեր կատարել, սակայն այդ կիրքերը փոքրոգի եւ Թոյլ անձանց երբէք չեն հասցնում իրանց նպատակին, այլ ընդհակառակն նոցա անուան ստորացնելու եւս պատճառ են լինում։ Ուստի, աշխատել երեխայի մէջ վառել հայրենասիրական եւ ազգասիրական զգացմունք եւ ուշ չդարձնել նորա ուժի վերայ, այդպէսով նորանից կարելի է պատրաստել մի ցանցառ եւ ԹեԹեւամիտ արարած, բայց ոչ երբէք քաջագործութեանց ընդունակ մի հերոս, ոչ երբէք առնող եւ ուսուցանող։

ԵԹէ մէկը նախապատրաստուած է լինել եւ վարժապետ եւ երկրագործ, եւ արհեստաւոր եւ վաճառական, եւ վարժապետ, եւ բանասէր, եւ զինուորական, եւ մշակ, Թող այս վերջին պաշտօնը լինի կատարելիս, դա այդու ամենայնիւ չէ ծառայ եւ ստրուկ, այլ այն պարոնն է ստրուկը, որ բացի մի պաշտօնից եւ այն շատ միակողմանի, ուրիշ գործ չի կարող կատարել։ Ա.յդպիսին կամայ ակամայ պիտի կապուի կաշկանդուի մի գրութեան մէջ եւ տանել հազար ու մէկ անպատվութեան։ Ա.յդպիսիք պիտի սպասեն Թէ երբ պիտի հասարակութեան մէջ բացուի այս ինչ պաշտօնը. եւ մինչեւ դորա բացուիլը պիտի Թափառին փողոցէ փողոց։ Ա.յս օրուան օրս մեր վարժապետաց եւ քահանայից մեծ մասը այսպիսի անձինքներից են. վա՛յ այն վարժապետին, որ ինքը Թերագարգ լինելով, կարծում է Թէ ուրիշներին կարող կը լինի կատարելապէս զարգացնելու։ Վա՛յ այն հոգեւորականին, որ կարծում է Թէ մարդասիրութիւն է այդպիսի մարդոց վարժապետական պաշտօն տալը։ Մասնաւորի կեանքի ապահովութեանը զոհել մի ամբողջ սերնդի բաղդաւորութիւնը եւ կեանքը,—սարսափելի մոլորութիւն է։ Վա՛յ այն ժողովրդոցը, որոնք հոգեւորական են շինում մի մարդու, նորա խեղճութեանը վերայ միայն ուշ դարձնելով եւ ճարահատութեանը։ Ո՛վ կարէ պախարակել մի բան, որ բարեսրտութիւն է։ Բայց մինԹէ բարեսրտութիւն չի լինիլ, եԹէ իւրաքանչիւր գիւղում եւ քաղաքում մի մի սեղանատուն բացուէին մարդոց ձրիապէս կերակրելու նպատակով. բայց ինչ չար բան կարող էր աւելի չար հետեւանք ունենալ, քան Թէ այս բարի ձեռնարկութիւնը։

Ա.յս հանգամանքը արդէն ինքն ըստ ինքեան մատ-

նայոյց է լինում, որ իւրաքանչիւր դպրոցին կից պէտք է լինի եւ մի արհեստանոց։ Եթէ աղջկանց դաստիարակութեան մէջ մեւագործութիւնը անհրաժեշտ հարկաւոր է համարվում, որքան առաւել հարկաւոր պիտի համարուի տղայոց մի որ եւ իցէ արհեստ իմանալը. Եւ այս ոչ միայն տնտեսական եւ մարմնամարզական կէտից նայելով մեծ օգտաւէտութիւն ունի, այլ նաեւ մտաւոր եւ հոգեկան զարգացման մեծ օգնութիւն եւ դիւրութիւն է տալիս, վասն զի մարդս մի միայն մտածելու չէ ընդունակ, այլ նաեւ երեւակայելու եւ գործելու։ Գործելը մի միայն զրելը չէ, եւ կարդալը, որ մտածելու հետ սերտ եւ անբաժան կապակցութիւն ունին, այլ այնպիսի գործ, որ հանգստութիւն է տալիս այդ զբաղմունքներին եւ ժամանակ է տալիս նոյա շունչ քաշելու եւ զօրանալու։ Արհեստները կարող են շատ հասարակներից լինել, ինչպէս են կօշկակարութիւնը (ի հարկէ աւելի կատարելագործեալ ձեւով), դերձակութիւն, հիւսնութիւն, երկաթագործութիւն, կազմարարութիւն եւ այլ այսպիսիք։ Մենք մեր դաստիարակութեան կերպը մեր ազգի վիճակին պիտի յարմարացնենք. ինչ հարկաւորութիւն կայ կուրօրէն հետեւել օտար ազգաց։ Ո՞ր բանիմաց մարդը չի կարող նախագուշակել, որ եթէ մեր դպրոցների ընթացքը այսպէս յառաջ երթայ ինչպէս այժմ, մեր մէջ կը շատանայ հետզհետէ ծրիապէս լաւ ուտել եւ լաւ հագնուիլ սիրողներու թիւը. եւ մենք ազգօգուտ անդամների տեղ կատանանք դատարկաշրջիկ եւ դատարկաբան անծինք։ Թող ոչ ոք միակողմանի չմեկնէ մեր այս ակնարկութիւնը եւ գայթակղի, այլ խոստովանի թէ ճշմարիտ է, որ մեր մէջ այսօրուան օրս անդամ շատացել են արդէն այնպիսի պատանիք, որոնք ըստ երեւոյթին ուսումնածարաւ են, բայց իսկապէս ծոյլ, անզօր եւ ապրելու հեշտ ճանապարհ փնտրող անծինք։ Մեր նախնիք իրանց աննշան ուսումովը մեծամեծ հարստութիւններ էին դիզում. բայց մենք այժմ պատրաստում ենք այնպիսի անծինք, որոնք վատնելու առաւել ընդունակ են, քան թէ շահելու իրանց հայրական ժառանգութիւնը։ Պէտք է երեւակայել, որ ծխական դպրոցի պատրաստական դասատանից մինչեւ համալսարանի չորրորդ եւ հինգերորդ կուրսը մի այնպիսի ժամանակամիջոց է, որ պարունակում է իւր մէջ միջին հաշիւ քսան տարի, իսկ քսան տարուայ ծախքը անում է շատ սակաւիկ տասը հազար մանէթ։ Հարկաւոր է այս բոլորը աչքի առջեւ ունենալ եւ մեր զաւակներին նախապատրաստել այնպէս, որ կարողանան առանց յոգնելու, առանց մեծամեծ կորստի, այնքան ճեռք բերել, որ կարողանան նորանից ազգին էլ մասն հանել. իսկ միակ մի զլուխ ապահովեցնելու նպատակով քառասուն տարուան հասցնել իւր կրթութեան շրջանը, այդ մի սարսափելի մոլորութիւն է։

(Շարունակելի)

Դ. Ա.

—

ՈՐԴԻՔՆ

Ա.Ո ՄԱՅՐՆ Ա.ՅՐԻ

Մի անյոյս ո՛հ, մայր, երբէք վըհատիր,
Մի քոյդ դառն օրեր, անվերջ հառաչիր.
Ա.յո՛ երկինք հաշտ, արդ մեզ կակնարկեն,
Ա.ստուծոյ գութը եւ սէր կաւետեն։

Փուճ անծկալի մեր մայր սիրական,
Հետեւիր որդւոցդ լուսաւորութեան.
Քոյդ միակ նըպատակ, զլխաւոր ջանք, ճիգ,
Մըտաց զարդացման Թող հոգան կարիք։

Քաղցրիկ գիտութիւնք զանազան ուսմանց
Ժամանակի պէտք, փառք են պարծանաց.
Ուր սոցին ճաշակ ոչ տայ ախորժակ,
Անդ ոսոխին ճանկք կանգնեն յաղթանակ։

Ա.պա յորդո՛ր տուր մեզ, Մա՛յր սիրական.
Թո՛ղ փուճալ տաճար չքնաղ կրթութեան . . .
Քաղել ընտանի, կարեւոր սերմեր,
Ա.պագային տալ արդիւնք բազմաբեր։

Գիտացի՛ր, յայնժամ, սէր մեր Մա՛յր այրի,
Փոխանակ սըգոյ, վըշտացդ բազմազդի
Յաջորդեն աւուրք, աւուրք երջանիկ,
Պերճ փառօք յաւէտ, եւ յոյժ բերկրալիք։

Ա.ՅՐԻ ՄԱ.ՅՐՆ Ա.Ո ՈՐԴԻՍՆ։

Ձեզ եւ եթ իմ յոյս վերջին ապաստան,
Որդիք անծկալիք, սրտիս ըսփոփանք.
Ձեզ աչքերս ուղղած, խանդաւառ մընամ,
Օ՛ն, յեռանդ, կայտառ, «Տէր ընդ ձեզ» կարդամ։

Փուճաբէք հապա, տաճար դիւտութեանց,
Անծանծրոյթ ընդով, լոյս տալ Ձեր մըտաց.
Չի դուք բաղձալի ուսմամբք զարդացած,
Ձեօք առնու «ոդի», ծեր Մայր այրիացած։

— Ս.

Նախընթաց համարի 18 երեսի երկրորդ էջումը փոխանակ ,,արեւելեան'' սխալմամբ ,,արեւմտեան,, է դրուած։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

յարաւև Հաստատութեան յիշատակը՝ ի ձեռն սրբոյն Գրիգորի Ե.-րդ Լուսաւորչին Հայաստանեայցս աշխարհի, որով և Ընա-քելական յաջորդութեան և իշխանութեան վսեմապանծ գահը վերականգնած է աստ՝ ի Վաղարշապատ ըստ կամաց և առաջնորդութեան Միածնին, յորոյ անուն և կը վայել էջմիածին։

Ո՜հ, որ՛ր են մեր անցեալ Ազգային և այլն փառաց հանդէսները. որ՛ր են երևելի անցից և յաղթական մրցանակաց տօները. որ՛ր են նոքա . . . ատեն, բուսական ժամանակէ ի վեր՝ տակաւին չը հանդիսանան, տակաւին կը լըռեն . . . , բայց Կրօնքը և Եկեղեցին, Կրօնական և Եկեղեցական արարողութիւնքն ու հանդէսքը դեռ կը փայլեն և պիտի փայլեն մինչև ի կատարած աշխարհի. որոց նա և բազմազարեան վկայն և վառքը պիտի հանդիսանայ Ս. Էջմիածինը(*)։

Աւելին Հայ.ք այժմ ունենալով մի միայն Քրիստոսական Ս. Կրօնքը և հինաւուրց պաթողիկէ Էջմիածինը, և նոցա մէջ տեսնելով նախնի փառաց և պարծանաց յաւիտենական յիշատակները և կոթողները, հետևաբար՝ ի նոցանէ միայն կընդունին ու կըսպասեն իւրեանց ցաւոց և տրտմութեանց մխիթարութիւն և վարատուր, և հոգեպարար բերկրութիւն։ Ուստի և իրաւամբ նոցա տարեկան Տօնը ինչպէս Ս. Լուսաւորչին սահմանած է, ամենայն Հայկազանց պաշտելի և մեծարելի լինելու անձկալի փոխանակ, ուրմն արժանի եր որ այս մասին առանձնապէս Ս. Ընթոցից միաբանութիւնքնաչ խանձելի օրինակ հանդիսանայր Համայն մեր սիրելի Ազգայնոց, քան զարժանն յոյժ շքեղ Հանդէսներով կատարելով միշտ համ ըստ ամէ պաթողիկէ Եկեղեցւոյս Ս. Էջմիածնի Տօնը, ինչպէս նաև այս տարի, անցեալ ամսոյ 22-ին կատարեց խիստ փառաւոր Հանդէսներով։

Էյսու առաջ առաւօտեան ժամին

(*) Թէպէտև դաւօր սրտի սա ևս պէտք է խոստովանիլ, որ սուրբ Էջմիածինը անցեալ ժամանակներէն կրած դէպքերէն այժմ դրեթէ աւերակ եւ ճըշմարիտ Աղտասիրաց սիրտերը ճմլող թշուառ դրութեան մէջ է նիւթական շէնքով. բայց անշուշտ եմք, որ ի շնորհս առատածեռն նպաստից եւ օգնութեանց արժանաւոր հարց արժանաւոր որդւոց, մեր ամենասիրելի ազգայնոց, նա ևս վերհատուր կաթողիկոսի անխոնջ ջանիւք եւ աշխատութեամբ, յետ մակաւուրց կրկին կը հասնի նախկին հոյակապ եւ զեղեցկատեսիլ պայծառութեան։

Այո, այս մասին եւ ոչ մի Հայ երբէք անտարբեր դոնուելու չէ։ վասն զի եթէ կը յիշեմք սուրբ Էջմիածնի անցեալը, եթէ կը յիշեմք մեր արժանայիշատակ նախնեաց ղէմ ի նա ունեցած սէրը, համակրութիւնը, ջանքը, ճիգը եւ զոհողութիւնները, որոնցմով նորա ոչ միայն նիւթականապէս իւրեանց հարստութիւնքը եւ բազմազգի նպաստները, այլ եւ մինչեւ անգամ, այո, ի պահանջել հարկին իւրեանց արիւնները չը խնայէին, եւ չը խնայելին ի սէր, ի փառս ի հաստատութիւն եւ ի պայծառութիւն նորին (Ս. Էջմիածնի)։ Ուստի մեք, որ կը պարծենամք եւ կը փառաւորուիմք այնպիսի նախնեաց որդիքը լինել, մինէ մեզ քաղցր եւ սրբազան պարտաւորութիւն չը պիտի համարիմք ըստ կարեաց օգնել եւ նպաստել Սուրբ Էջմիածնի այժմեան աւերակ վիճակը, պայծառաշէն դրութեան վերածելու ի պարծանս մեր եւ ի փառաւորութիւն մեր սուրբ Կրօնիդ եւ Եկեղեցւոյ։

Արդարեւ այս մասին մեր սրբազան պարտքը կատարած միջոցին, պէտք է իմանալ, թէ տակաւին զմեզ արժանայիշատակ նախնեաց արժանաւոր որդիք դասելու համար, այլ եւս ունիմք առաւել բարձր եւ առաւել վսեմ պարտաւորութիւններ, զորս ի պահանջել հարկին ամենայն սիրով հարկ է վճարել։ Ուստի եւ ամեն պարագայի մէջ . . . անմոռանալի բարար պէտք է զմեզ պատրաստ եւ կազմ պահել, որպէս զի Հայութիւնը, նորա Կրօնը եւ սուրբ Եկեղեցին մինչեւ ի վախճան աշխարհի բարձր ի գլուխ Ծող փայլի եւ յառաջադէմ զարգանայ, եւս սուրբ Էջմիածինը Ծող նորա բազմադարեան վկայն ու վառքը հանդիսանայ պայծառութեամբ եւ ի դրանց զժոխսց անսասանելի հաստատութեամբ։

Գնալ ի նոր վարդապետ՝ Պանապմայն և Պալբքինեալս Աստուածդը դեղեցիկ մի Առաքնաբանութիւն խօսեցաւ։ Աղաղակեցի Ժամանակ ոչ կհասանէին սրահը Երժանապանեալ Դիտեա Եբենոյ Զաղաղեանը խիստ ապրած և պատշաճ մի Ճառ ընթերցաւ, զոր նախկին կը հաղորդեմք մեր սիրելի Ընդայնոց։

Առաք սկզբանական մեջ ակնյայտ Գրիգոր ուխտակիցը մի ուղերձ ինդպատ։ Որ յետոյ "կեցցէ" նոր գոչելով հանդիսականք, Ս. Աթոռոյս Հաստատութեան և յառաջադիմութեան, և Ազգիս Հայոց լուսաւորութեան և յառաջադիմ բարգաւաճման համար բաժանեցին քաղցրութիւն։

Այնպէս վանն կենաց երկարութեան՝ և նպատակաց ուն ձեռնարկեալ գործոցն յաջողութեան և պրպտնաւորութեան ոչ հավատաս Աստուղիկոսի բաժանիլն առաջարկուեցան, և սրտաբուղս "կեցցէ" ձայնից գոռումբ, յայտնի կը պարզէր զգայուն և եռանդուն հանդիսականաց հաստկրութիւնը և սերը առ ոչ հավատս և սրբազնագոյն Կաթողիկոս։

Նակ երեկոյեան հրաժարութեանդ հանդիսին դեղեցկութիւնն ևս զմայլելի էր։ Ընբոլոր ժողովրդին մեծ ուրախութիւն միանգամայն մխիթարութիւն ազդեց։

U

ՄԱՂԹԱՆՔԻՆ ԿԱՐԳԱՑՈՒԱԾ ՃՈՂԸ

ՎԵՀԱՓԱՌ

ՍՐԲՈՑՆ ԳՈՀԱՆՆՅԱՊԵՏ

Հրաշափառ և երկնահանդէս աւուրս ուրախութիւն հաւատոյ ասէնք զայն սրբատեսանողն ուրախարան զգացմունս, զոր կրէ յինքեան լուսթիւն ընդհանրութեան Աղգիս՝ վերջ միօրինակ, սովնայն ուրիք, վերջերութեամբ առ սուրբ և յառաքելական Եկեղեցին իւր. վասն զի՝ ուրնէ նա այսօր միահամուռ հանդգնակցութեամբ կհիմնարկութիւն այնր Տաճարի փառաց սրբութեան, ոչ Աստուն է ամենայն եկեղեցեաց իւրոց, զորով և լուսթեան իւրոյ։

Եւ ահա այսօր Ազգ մեր և Եկեղեցի կատարելով զայս գերագոյն հանդէս հոգևոր ուրախութեան, ուրնէ նա այսօր հոգևոր փրկութեան և երջանկութեան իւրոյ ղառաջին սկզբնաւորութեան գիշերապահն Աստուածածնութեան և Փրկութեան։ Տօնէ դընորհս բարերարին Աստուծոյ, որով ի մահուանէ՝ ի կեանս և ի խաւարէ՝ ի Հրեշտակական ապիտութեան՝ ի լոյս վերանորոգեցաւ աշխարհ իւր։ Տօնէ զայն փառս և զպարգև երկնաւորս, որով կեանք մարդկան անօրինեցաւ յուղղութիւն և յարդարութիւն, և զայն երախտիս՝ զոր ընկալաւ նախահայրմանութեամբն Աստուծոյ, բազմաչարչար նահատակութեամբ սրբոյ Լուսաւորչին իւրոյ, որով փոխարինեաց և եա՝ ի գոյ երախտագիտութեան իւրոյ և ի յայտնել ընշանակութիւն գործոյ նորին՝ զանուանս "Լուսաւորիչ" ուրեմն և գիշատակ Լուսաւորութեան իւրոյ։ Յիշեցուցանէ Տօնահանդէս Հոգեւոր, նաև՝ զայն փառաւորութիւն Եկեղեցւոյս մերոյ, որով աւուրք Առաքեալքն Քրիստոս և Նարդուզեվոս անդամոն եղեն հիմնարկութ Վրիստոնէութեան՝ ի Հայաստան աշխարհի, որպես յետոյ յաղթոյն արձագանման սրբոյ Հայրապետին, ըստ Եհեմիականին անշէջանելւոյն այնուհետև միշտ՝ ի սպաս։

Եւ թէ զայս ամենայն յորդորելի անօրինութիւն վերին Տեսչութեանն, յայտնապէս իսկ է, զի ոչ կարէր մարդ առնել զդիմս ինքնին զօրութեամբ անձին իւրոյ։ Աստի հիմունք սրբոյ Տաճարիս և Եկեղեցւոյս հիմնեալք են՝ ի կամս Աստուծոյ, իբրև

Եւ զի՝ ընդ անմիջական հովանեաւ Տաճարիս լուսոյ՝ լրանալն և պատկառելի հոգեւորական պատուոյ հանգամանքիւս նրա այս՝ ընդ համայն զգեստոց իւրոց՝ հնչեցուցանէ յիմիկս զվեառն և զգահուիճն առ երիտասարդ թագաւորն և մատեթէ պահապանութիւնն և զանցպաղութիւնն վասն սորին, որով ընդունի զգործական աչս նորին։

Այլ ևս աստ, այսօր ընդհանրութիւն զգեստոց Մայր եկեղեցւոյս և Աստուածհաստատ սրբոյ Աթոռոյս՝ շղթայիւք նեղբրտանաց ոբծրտութեանս այսորիկ, ի պահանջ անկաւանան և ի հեռաւորութեան իւրեանց՝ կապեն և միաւորեն զիրար իւրեանց և պհոգի ընդ միմեանս և բոլորքեն ի նոսա զԱստուածահաճոյ սէրն եղբայրութեան և պհուին հաւատոյ, գորով զաւակունք մի և նոյն Օրէն իւրեանց՝ որով և կաղմեն զմի զրօրեղ և զանպիտան ամբոխ ջոխիչն, առ ի չհատանիլ երբեք ի յոյժ ձանոյց զգուշոյ և ի հեղեղաց զայրաբաղխից ի յաւիտեանս ժամանակաց։

Օգնական ի սխրութեան անուանի լեառն սուրբ Մասիս, վասն զի՝ բարձրահայեաց սկզբունք իւր ոչ նշմարեն շուրջ զիւրեւ հանգիստ ընդ ոտից իւրոց սեպհականաց. սակայն Եկեղեցին սուրբ, Աստուածահաստոյց Տաճարն սրբոյ հիմամբ զանխորհրդական նորին՝ գործակից սկզբունքիւ իւրով. յորում նոքա (որդիքն) կապեալք են համակրութեամբ միանգամայն, ոչք հեռացեալք, առիթ վշտաց նորա լինելին։ Եւ ինքն սուրբ Եկեղեցին, որ փոխարինէ հոգեւոր և համաւասիւս հրճուանաց որդւոցն իւրոց՝ զմայրական զօրհնութիւն իւր և զերկնաւոր բարեմաղթութիւնս, երբ ունելոց է այսպէս զոհրութիւնն իւր՝ ի կատարեալ և՝ ի մխիթարական ահմանի, քայց միայն յայնժամ,

զնաւն յաւիտենական և անշարժ «Հիմունք նորա՝ ի լեառն սուրբ նորա»։ վասն զի վեմք չինուածոյ Սրբութեան նորին հաստեալք են՝ ի լուանէն Սիոնայ և ընծայեալք աղդի մարդկան. վասնորոյ և "Սիրէ Տէր զԱիօն առաւել քան զամենայն յարկան Յակովբայ". և վասն զի՝ Գոյն Տաճար սրբութեան, Գոյն Յարկ լուսեղէն ծնանի անընդհատաբար զկենդանի տաճարս Աստուածոյ և պարզեւէ նոցա զըրգեղութիւն Հօրն երկնաւորի, ջամբելով զկաթն մայրական և անուշանալով յերկուսիս ընդհանուր իւրաց։ և զի՞նչ կաթն՝ ի նմանէ ջամբեալ, որով զրգիք իւր ապրին՝ ի մանրկութեան հանապատաշաք նմին և պահպանեն յիւրեանս զմարդպակել կեանս։ զի՞նչ ևնթադրէ կամիլ բարեպաշտական, եթէ ոչ՝ զօրէնս Աստուածայինս և զնոյն խոկ զբարոյականութիւն, և տարկք երջանկութեան մարդոյ, յիմիքէ գոյանան և տածին, եթէ ոչ՝ ի կամանել զայդմանէ մատակարարելոյ յերկնուստ, յորում աւիրուին՝ մայրական օրհնութիւն իւր և յաւետութիւն կենաց մարդկան։ Եւ այդու ևս "Սիրէ Տէր զՍիօն, առաւել քան զամենայն յարկան Յակովբայ"։

Զնոցայ և զրաւորեանդ այսօր անտեսեալ ուրախութեամբ, հարմանացեան Երկնաւոր փեսային Աքեղբեկ սուրբ Հոգւոյն զնոցայ Աստուածահաստատ Տաճարիս Տեառն Յիսուսի Քրիստոսի Եկեղեցեացս՝ այսաստանեայց. քանզի ահա արժանաժառանգ Յաջորդ սրբոյն Գրիգորի լուսաւորչին իւրոց, ո Հհատաւ Սրբազնագոյն Աքեղբեկան իւր շքեղացուցանէ և փառապսպրէ զԱթոռ սրբութեան իւրոց և զնոքա զհետս ախորհեան, որ՝ ի գարս գարս ըստ հանգամանաց ժամանակին սովոր էր տարածանել՝ ի վերայ նորա զգոյդ և զամ զայրութեան անսրբօգութիւն, որ արդէն անմատչելի է վասն նորա, թէ՝ շնորհիւ Օգոստափառ Տէրութեանն, և թէ՝ գերափառ արժանաւորութեամբ զհաւժարանպայ իւրոց։

երը՝ վոխանակ, ի հնուէն ի գրան Տաճարին Սողոմոնի եւեալ խորհրդական հրոյն եւ ջրոյն՝ հուրն հաւատոյ ի սիրտս որդւոց իւրոց ջինջ տպաւորութեամբ վառ եւ բորբոքելով՝ տեսանիցէ ի միտս նոցա զգայն իմաստութեան եւ լուսաւորութեան անապօտ եւ անաւուր լուսով լուսափայլեալ եւ պայծառացեալ: Սակայն նոքա, որդիք իւր, ըւ կարեն զարդացուցանել յինքեանս զանթառամն գլուսաւորութիւն եւ զպանծալի փառս ուման եւ գիտութեան, եթէ ոչ, զարձեալ՝ հովանաւորութեամբ եւ շնորհիւ դոյն իսկ Աւրն քալեկնամի, որոյ փառքն նոյնպէս զարգանալոց է ի նոսա փոխադրեալ՝ յիւրեւն ընկալեալ երախտացն ազգեցութեամբ. վասն որ՝ նա աւանիկ, որդւոց նորին համաւիտ եւ միակամ խնդրուածքն բարձրանան առ Տէր "Ծագաւոր երկնաւոր, զԵկեղեցի քո անշարժ պահեա եւ զերկրպագուս Անուանդ քում պահեա ի խաղաղութեան":

Եւ Դուք, ո Ընտրեալ ազգ եւ ի հետ վառ. Հայրապետ, Փոխանորդ եւ Պատկեր անձնատ փեսային Քրիստոսի. Ահա այսօր փառաւորի Եկեղեցիս սուրբ, փառք ի հափառութեան Հերոյ եւ արժանաժառանգ Գահակալութեամբ Հերով, որով՝ պանծացուցանէք զփառս եւ զպատիւ նորին: Եւ ահա, տեսանելով զՀեզ հեռւոզ մեծագործութեանց եւ շաւղաց սրբոց Հայրապետացն իւրոց Գրիգորի Լուսաւորչին, Մեծին Ներսիսի եւ Սահակայ Պարթեւի, եւ այլոց նմանեաց հարց երջանկաց՝ բարձր ի գլուխ պանծայ անթերի եւ լեալը ուրախութեամբ. եւ որդիք ի հին Դասք Սրբազան Հոգեւորականաց եւ բարեպաշտ աշխարհականաց, ահա՝ խնդրեն զսուրբ Հայրապետական Հեր զօրհնութիւն, եւ ընդունին՝ վերուղղեն զաղօթս եւ զխնդրանս առ Բարձրեալն Աստուած, վասն երջանկութեան եւ երկայնութեան կենաց Սրբազնագոյն Հանդայագետիդ, ի մխիթարութիւն ընդհանրութեան Ազգիս Հայոց եւ ի պարծանս Ընտրեալ Ազգիս Հայկազեան Տկեղեցւոյս մերոյ սրբոյ. ամէն:

Եղիայ Աբեղայ Ջալալեանց.

Ի 22-ն յունիսի 1869:

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՐՑԱՐՁՆՈՒԹԻՒՆԸ.

Սուրբ Էջմիածնի Ժառանգաւորաց Ուսումնարանին հարցաքննութիւնը մայիս 26-էն սկսելով մինչև յունիս 15 աւարտեցաւ: Յիշեալ հանդիսին ներկայ և քննիչներն էին սուրբ Էջմիածնայ բարձրաստիճան և գիտական միաբանները, Ամենաշնորհ Վեհափառ Վ. Անահայրը և Պանուրմայու Վեհապատիւ Առաջնորդը:

Աւորև քննութեան պատկերէն կ'երևի, որ աշակերտք ըստ բաւականին նոս և նոր յառելացած մի քանի առարկայից մէջ, ոչ սակաւ յառաջադիմութիւն ցցուցած են:

Համեմատութեամբ անցեալ տարիներու՝ այժմ Ուսումնարանը կարևոր առարկանեւով զարգացած է, և աշակերտաց ու զաստիարակաց փոխադարձ ջանքերը կը պսակեն ինչպէս վ. Հայրապետական աւետեաց Հոգեկոչման Հանդիսից, նոյնպէս սիրելի Ազգիս իղձերը: Սակայն այսուամենայնիւ կրկին պէտք է խոստովանիլ, որ տակաւին կան բաւական առարկայից պակասութիւններ, որք և այնուհիւ վ. Հայրապետական Հոգեկոչման օր աւուր կը լրանան, մանաւանդ երբ նոր Ուսումնարանին շինութիւնը կ'աւարտի:

ՊԱՏԿԵՐ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՐՑԱՓՆՆՈՒԹԵԱՆ
ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՌՈՒՍԻՆԱՀԱՏԱՆԻ ԱՒԱՐՏ ՏՕՐԴԻՆ
ԷՋՄԻԱԾՆԻ.

5 Գաղափարն	4 Գաղ.	3 Լուս.	2 Միջնակ.	1 Դ. աստ.	Կրօնագիտութիւնն	Մաթեմատիկան	Հայոց պատմութիւնն	Աշխարհ. պատմութիւն	Ընդ. Պատմութիւն	Աշխարհագրութիւն	Ռուսերէն լեզու	Թուաբանութիւնն	Դասընթերքէն լեզու	Գ. ուսումնարանութիւն	Երկրագրութիւնն
Ա. ԴԱՍԱՏՈՒ.															
Զոհրաբ Տէր Սարգսեան					4	5	5	4	5	4	5	4	5	4	5
Յովհաննէս Յակովբեան					4	5	5	4	5	4	5	4	5	4	5
Երանոս Գէորգեան					4	5	5	4	5	4	5	4	5	4	4
Կարապետ Գրիգորեան					4	5	4	4	5	4	5	4	5	4	5
Վարդան Տէր Վարդանեանց					3	5	4	3	5	3	4	3	5	4	5
Մկրտիչ Յովակիմեան					3	5	4	2	4	3	2	3	2	3	4
Աւետիս Մելիտոսեան					3	5	4	2	5	3	2	5	3	4	3
Ենովք Մովսիսեան					3	4	4	2	4	4	3	4	4	3	2
Մարտիրոս Տէր Դաւթեան					3	4	4	2	4	4	2	4	3	3	2
Արշակ Մկրտչեան					4	4	3	2	2	3	2	2	3	3	3
Յովհաննէս Գրիգորեան					3	4	3	2	3	4	1	2	2	3	2
Սիմէօն Ալէքսանեան					3	4	3	2	3	3	1	3	3	2	2
Մկրտիչ Աիթպէլեան					3	4	3	2	3	3	2	3	2	2	2
Դանիէլ Տէր Պետրոսեան					2	5	4	2	5	3	1	4	2	2	2
Համբարձում Գէորգեան					3	5	2	2	3	3	2	3	2	2	2
Գաբիէ Սաաոունեանց					2	4	3	2	3	2	2	3	3	2	2
Բ. ԴԱՍԱՏՈՒ.															
Մակար Գրիգորեան					3	3	3	2		2	2	4	4	3	
Մատաթիայ Ալանեան					3	5	5	2		4	3	4	3	4	
Սահակ Գէորգեան					3	5	5	2		4	2	3	4	3	
Ալէքսան Բէկպարեան					3	3	3	2		3	2	2	3	2	
Վարդան Մարտիրոսեան					3	3	4	2		2	2	3	3	2	
Բաղդասար Մկրտեան					3	3	4	2		3	2	4	3	3	
Եփրեմ Գալվաճեանց					3	5	4	3		4	3	3	3	3	
Յովհաննէս Գրիգորեան					3	5	3	2		3	1	4	2	2	
Գրիգոր Տէր Սահակեանսեան					3	3	2			2	2	3	2	2	
Երուանդ Գօդոսեան					4	4	2			1	1	2	1	2	
Գրիգոր Աղդէսեան					3	3	2			1	1	2	1	2	
Մուշեղ Մուշեղեան					3	3	2			1	1	2	1	1	
Խաչատուր Տէր Յովհաննէսեան					3	5	3			2	2	2	2	2	
Մելքիսեդէկ Խաչատրեան					3	3	3			2	1	3	2	2	
Գօդոս Ներսէսեան (հիւանդ է)															
Յովհաննէս Թումասեան					3	3	3			2	1	2	1	1	
Ղազարոս Յովսէփեան					3	3	4			3	1	2	3	2	
Նիկողայոս Յովհաննէսեան					3	3	3			2	1	3	2	1	
Գէորգ Մկրտեան					3	3	4			2	1	4	3	2	
Յակովբ Ենովքեանց					2	2	2				1	2	3	2	
Յովսէփ Գալֆեանց					2	2	2				2	3	2	1	

Վ. Հայրապետ Կաթողիկոսը բարեհաճեցաւ Ներկայ Ամի Զմրուխտ ականակուռ Մատանի Ընդհակ Ս. Պօղոսի Պատրիարքական Տեղապահ Գերապատիւ Եպիսկոպոս Ս. Ընթ Եպիսկոպոսին յաղագս հաւատարիմ և անձնանուէր Ծառայութեանցն Նկեղեցւոյս Հայոց:

Նոր-Նախիջեւանայ Մարդասիրական Ընկերութեան առ Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց ներկայացուցած անցեալ 1868 ամի Յայտարարութիւնը եւ Հաշիւը:

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ Դ. ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի Հոգաբարձուաց Մարդասիրական Ընկերութեան Հայոց Նոր-Նախիջեւանի

Յայտարարութիւն

Ընտ ԺԲ. յօդուածոյ Սահմանաց Մարդասիրական Ընկերութեան, հաստատելոց Ի Սրբոյ Էջմիածին Չերմ, պարտք անհրաժեշտ լինելով Հոգաբարձուացս տալ զտարիական հաշիւ մտից և ելից արդեանց Ընկերութեան յիւրաքանչիւրում ամի, եւս և գործոզութեանց եղելոց Ի տարւոջ, ընդհակառակ յիօթնորդի առաւր ամենեքեան ապրիլի տարւոյս ներկայացուցանել առաջի ընդհանուր ժողովոյ պատուական Ընդամէնց Ընկերութեան զհաշիւ անցելոյ 1868 ամի, պարզելով Ի նմին մանրամասնաբար զմուտս և զելս արդեանց, զնուիրատուծութիւնս ոմանց յանգամոյ յօգուտ Ընկերութեան և Հոգաբարձուացդ պարտին սրբոյ Խաչի վանուց քաղաքին և յիշատակելով կարճօրէն զգործոզութեանց եղելոց Ի նմին տարւոջ Ի մասին բացման դպրոցին այնորիկ և զյառաջադիմութենէ աշակերտաց նորին:

Օրինաւոր պատճէն բովանդակ հաշուոյն այնորիկ վաւերացուցեալ մերով տառագրութեամբ ընդհ ունիմք ամենախոնարհաբար և յարգանօք բազմօք մատուցանել ընդ այժմ Չերմ Ընտրաժընտիր Վեհափառութեան և յայտ առնել, զի յօթն, բացման Հոգաբարձուացդ դպրոցին մինչ ցայս վայր ժամանակի ակն յայտնի տեսանի Ի միոյ կողմանէ, Ջանասիրութիւն դաստատաց մանկանց, և Ի միւսմէ կողմանէ գովելի յառաջադիմութիւն աշակերտաց յուսմունս և Ի բարեկրթութեան. և յուսալի է անտարակոյս, Վեհափառ Տէր, զի ընդ քաղցր հովանաւորութեամբ Սրբութեան Չերոյ դպրոցն այն յառաջացի և աշակերտք նորին զարգասցին յուսմունս բարեկրթութեան:

Եւ քանզի ըստ պարտութեան ԺԲ. յօդուածոյ Սահմանաց Ընկերութեան՝ տարեկան հաշիւ գումարաց և գործոզութեանց նորին հարկ ապագրիլ յօրագիրս վասն ընդհանուր տեղեկութեան, վասնորոյ ամենախոնարհաբար խնդրեմք Ի Սրբութենէ Չերմէ, զի բարեհաճեսցիք հրամայել ումմ հարկն է, հրատարակել զհաշիւ Ընկերութեանս տպագրութեամբ յԸրուրատ ամենապղծին:

Չերոյն Ընտրաժարեալ Օծութեան խոնարհ Ծառայք

Եսայեան թահանայ Ջարիֆեանց
Եպիփան Յակովբեան Պոպովեանց
Օհան Զուպարեանց
Պարոն Պաթրեանց
Յովակիմ Նազարեան
Միրայէլ Կարապետեանց
Յովհաննէս Սալթիքեանց
Յովհաննէս Պապասենեան

Համար 18
ի 22 մայիսի 1869 ամի եւ Ա44. Ի3ԾԸ
Ի Նոր-Նախիջեւան:

ՀՍՏԻ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐ — ՆԱԽԻՋԵՒԱՆԻ 1868 ԱՄԻ

Առաջին անգամն է այս, որ Հոդաբարձուաց խորհրդարանս Ընկերութեան հաստատմանէն յետոյ, պատիւ ունի ներկայացընել պատուական անդամոց Ընդհանուր ժողովոյն, Ընկերութեան անցեալ ամի տարեկան հաշիւը. առաջին անգամն է այս, որ միահամուռ ժողովուած պիտի տեսնէք այս բարեգործական Եղբայրութեան բազմամեայ աշխատանաց առաջին պտուղները: Բազմամեայ կըսէ խորհրդարանս, վասն զի այս գովելի ազգօգուտ Ընկերակցութեան սկիզբը, ինչպէս որ անդամոց շատերուն յայտնի է, եղած է 1846 Թուականին, երբ Ջեզմէ մէկ քանի հայրենասէր եւ ուսումնատենչ անձանց ազնիւ սըրտերուն ցաւ երեւնալով իրենց պատանեկութեան ժամանակի հասարակից չքաւոր տղայոց դատարկ շրջիլը եւ անուսումնութիւնը, կարեկցութեան արդար զգացմունքը ծագել է նոցա սրտերնուն մէջ այնպիսի անուսումն եւ դատարկաշրջիկ տղայոց մէկ քանիին ուսումն եւ կրթութիւն տալու, եւ այս պատճառաւ ասհմանել են իրենց մէջ զանձանակ մը, յորում առջի մէկուդ Ձեզնէտ անձնական դրամոց կը ձգէր իւրաքանչիւր ընկերակից պատուիրեր, բայց ետքը այնպիսի պատուական եղբայրակիցներուն եւ դրամագլխոյն յաւելցնալովը, որոշեր են իրենց մէջ համահաւասար տարեկան տուրք մը եւ այս իրենց փոքրիկ, բայց անգին ձեռնարկութիւնը յանձնելով Տիրամօր աւուրբ Սատուածածնի պաշտպանութեանը, շարունակեր են զայն անվհատ եւ անվրդով մինչեւ 1867 ամն, այսինքն մինչեւ իրենց ընկերութեան կատարելապէս հաստատման օրն, որ եղեւ յիշեալ տարւոյն հոկտեմբեր ամսոյ մէջ:

Վեհափառ Հայրապետն մեր, Սրբազնագոյն Կաթողիկոսն ամենայն Հայոց Տէր Գէորգ Դ. իւր Նորնախիջեւանի շնորհաբեր այցելութեան ժամանակ, առանձին ուշադրութիւն դարձնելով առ այս Ընկերութիւն եւ սորա նպատակը համեմատ գտնելով իր են միտքի դրած, ազգիս մատաղերամ մանկտւոյն ուսման եւ յառաջդիմութեան համար անելու ծեռնարկութեանց, սիրով ընկալաւ Ընկերութեանս առաջարկած կանոնները եւ հաստատեց զանոնք իւր բարեխնամ հոգատարութեան, այնու նպատակաւ որ Ընկերութիւնս պահպանէ եւ կառավարէ իւր սրդեամբը Նախիջեւանի Սուրբ Խաչ վանքի մէջ բացուելու ժառանգաւորաց Դպրոցն:

Ինչպէս որ կերեւի առաջուան մատեաններէն եւ հաշիւներէն, որք անկորուստ պահպանուած են խորհրդարանիս մէջ, այս կենցաղօգուտ գործոյն սկզբնապատճառ անձինքն եւ ապա հետզհետէ անդամ գըրվողներն հազուագիւտ միաբանութեամբ իրենց բըռնած գովելի ընթացքէն երբէք չեն խոտորած. եւ ժամանակ ժամանակ բարեգործութիւններ արել են, յորոց առաջինն կարելի է ասել Եկատերինոպար քաղաքին Հայոց նորահաստատ դպրոցին համար եղած դրամային օժանդակութիւնն է: Այն միաբանութիւնը եւ եռանդը աւելի յայտնի եղաւ Ընկերութեանս հաստատմանէն յետոյ, որով եւ կարճ ժամանակէն սկիզբ եղաւ բացման ժառանգաւորաց դպրոցին:

Ընկերութիւնս իւր հաստատման ժամանակ այսինքն անցեալ 1868 ամի սկիզբը ունէր 4000 ռուբլի արծ. դրամագլուխ, յորոց երկու հազար (2000) ռ. ըստ զօրութեան Դ. յօդուածոյ կանոնադրութեան, հաստատելոյ ի Վեհափառ Հայրապետէն մերոյ, համարելով հիմնական դրամագլուխ, մնացեալ 2000 ռուբլին համարուած էր պատրաստական դրամագլուխ, որ ըստ զօրութեան Ե. յօդուածոյ կանոնադրութեան դրուած էր մասնաւոր անձանց ի շահեցողութիւն տոկոսիօք ընդ երաշխաւորութեամբ Հոգաբարձուաց խորհրդարանիս մի տարի ժամանակաւ:

Խորհրդարանս ըստ յանձնարարութեան ընդհանուր ժողովոյ անդամոց Ընկերութեան, մտադիր լինելով անցեալ տարւոյ յուլիս ամսոյ սկիզբը, բանալ ժառանգաւորաց Դպրոցն սուրբ Խաչ վանքին մէջ, Նախիջեւանի Հոգեւորական Կառավարութեան առաջարկած չքաւոր հոգեւորականաց որդւոց ցուցակէն որոշեց յաշակերտութիւն ի դպրոցին ութ տղայս եւ ի Թուոյ Հոգաբարձուաց խորհրդարանիս ընտրելով երկու անձինս, այն է զՏէր Խաչատուր քահանայն Զարիֆեանց եւ զպարոն Յովհան Գրիգորեան Զուպառեանց, Դպրոցին հոգաբարձութեան պաշտօնը վարելու համար, երկամեայ ժամանակաւ համաձայն կանոնադրութեանն առանձին յայտարարութեամբ խնդրեց ի Ներին Վեհափառութենէն որպէս այս եր-

կու հիմնարարծուաց հաստատութիւնը, նմանապէս եւ այն ոյ դպրոցին Ծախքն բոլորովին Ընկերութեան վրայ չծանրանալու, եւ եւ փութով դպրոցին բացման սկիզբ անելու համար, աշակերտաց անունդն վիայն մատակարարուի վանքի արդիւնքէն: Վեհափառ Հայրապետն ընդունեց խորհրդարանիս այս խնդիրը եւ անոր կատարումը հրամայեց առանձին կերպիւ վանքի Վանահօրն, որ ըստ զօրութեան կանոնադրութեան է Տեսուչ ժառանգաւորաց Դպրոցին: Վերջէն վերջը խորհրդարանիս կանոնադրութեան Ը. յօդուածոյն համեմատ հոգւոյ աշակերտաց ամենատեսակ պիտոյքը ՔՀ իրենց վրայ եւ ՔՀ Դպրոցին մէջ վարժող դաստուր եւ անցեալ տարւոյ յուլիսի 1-էն սկսեալ դասատուութիւնը այն Դպրոցին մէջ, որ մինչեւ ցայժմ բաւական յառաջադիմութիւն կը տեսնուի աշակերտաց կողմանէ:

Խորհրդարանիս անցեալ տարւոյ մէջ ունեցած մուտքըն եւ ղպրոցին ու իրեն կառավարութեան համար եղած ծախքն գրեթէն առաջ, հարկ կը համարէ յիշել որ Ժառանգաւորաց դպրոցին բացման ժամանակ քանի մը անծիւր ընկերութենաս անդամներէն տրին նուիրատուութիւններ եւ օգտակար առաջարկութիւններ, որոնցմէ պարոն Յովհաննէս Մինասեան պէրպէրեանց բժիշկն ինքնակամ յայտնեց իրեն պատրաստութիւնը ծրիապէս բժշկել դպրոցին աշակերտները. պարոն Մահտեսի կարապետ Գէորգեան Շըլթեանց գրաւոր խոստացաւ ամէն տարի ընծայել դպրոցին 60 ռուբլի արծ. պարոն Գէորգ Մելքոնեան Քառօղլուեանց ղեկծակն յայտնեց իրեն պատրաստութիւնը ամէն տարի հինգ աշակերտաց դգեստները ծրիապէս կարել եւ պարոն Յովհաննէս Նաւումեան Սահրմտեանց ընծայեց դպրոցին հարիւր օրինակ Տրուխառոր անուանեալ աշխատասիրութեան իւրոյ:

Ընկերութեան ունեցած մուտքն անցեալ տարւոյ մէջ եղած են

		ռուբ.—կոպ.
ա.)	ՅԱտրպատականի Հայկազն Մկրտչէ Գէորգեան Սիմէօնեանց մի պանքական պիլէթ ի դումար հարիւր ռուբլեայ, Ընկերութեան նախանձաւորի կոչումը մշտնջենաւորապէս պահպանելու համար . . .	100 — ,,
բ.)	Ի Նոր-Նախիջեւանցի Տիկին Սըրբուհի Եմիշեանէ ընկալեալ է միանուագ, Ընկերութեան անդամոյ անունը մշտնջենաւորապէս ունենալու համար	120 — ,,
գ.)	Կամաւոր նուէր ի Նախիջեւանցի մահտեսի կարապետէ Շըլթեանց վասն վեց ամսոյ . . .	30 — ,,
դ.)	Ի 124 անդամոյ տարեկան բաժանորդագին, յիւրաքանչիւրոյ վճռուբլի արծ	744 — ,,
ե.)	Տոկոսիք տասն տոմսակաց ընկերութեան ա. փոխառութեան. .	30 — ,,
զ.)	Վեց ամսեայ տոկոսիք պանքական պիլէթին նուիրելոյ ի Տէր-Սիմէօնեանց Մկրտչէ	2 — 30
է.)	Տոկոսիք դրամոյ, որք տրուած էին վասն շահեցողութեան ի ծեռս մասնաւոր անձանց ընդ երաշխաւորութեամբ Հոգաբարձուաց խորհրդարանիս	121 — 40
	Ընդ ամէնն մտից դումարն եղել է	1167 — 90
	որ անցեալ տարւոյ սկիզբը եղած 4000 ռուբլի արծ. դումարին հետ կը լինի....	5167 — 90

Իսկ ծախք եղել են անցեալ տարւոյ մէջ

ա.)	Վասն աշակերտաց ժառանգաւորաց դպրոցին, հանդերձեղէններու, դրենոյ եւ այլ ամենայն պիտոյից դասատուանց, ճաշարանի, ննջարանի եւ այլոց	360 — 22
բ.)	Ի պէտս կառավարութեան խորհրդարանիս	103 — 94
գ.)	Հատուցեալ է վանահօր ի սնունդ վարժապետի միոյ վասն վեցից ամսոց	35 — ,,
	Ընդ ամէնն ծախուց դումարն եղել է . .	499 — 16
	զոր ի բաց հանելով ի մտից դումարէն կմնայ ներկայ 1869 տարւոյ սկիզբը	
ա.)	Տասն տոմսակ առաջին նիերրին փոխառութեան ի դումար . .	1300 ,,
բ.)	Մի պանքական պիլէթ	100 — ,,
գ.)	Պատրաստի դումար դրամոյ . . .	3268 — 74
	Ընդ ամէնն	4668 — 74

ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ԱՆԴԱՄՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

27 Ապրիլի 1869 ամի, մեք ի նկատի առեալք Ընդհանուր Ա՛ժողովական Ընկերութեան Հայոց Նոր-Նախիջեւանի ժողովականք ի միասին վառն վերահաստատ լինելոյ Ընկերութեան 1869 տարւոյն մէջ ունեցած մտից և ծախուց հաշուոյն, զոյք նախ՝ որ ընկերութեան մասեանները գործադրուած են հոգաբարձուաց խորհրդարանին ձեռօք օրինաւոր եղանակաւ ըստ կարգին, և երկրորդ՝ տան առնելոյն առաջին նկատին փոխառնութեան ի դուռն 1300 ռուբլեայ արծ., մի պանքական պիլէթին ի գումար 100 ռուբլեայ արծ. և պատրաստի դրամն 3268 ռուբլի 74 կոպ. արծ.՝ ամբողջ կը գտնուին ընկերութեան գանձապահին մօտ: Կարգադրեցաք՝ նախ՝ որովհետև ըստ զօրութեան Ա՛նդամագրութեան Ընկերութեանս առ ձեռն հարկաւոր գրամագլուխն կը կազմեն հիմնական և պատրաստական գրամագլխոյ չորս մասին երեք մասն, և թէ անցեալ 1868 ամին մէջ գոյացած ի տարեկան բաժանորդագնոյ անգամոյ, կամաւոր նուիրատուաց, տոկոսաց հիմնական և պատրաստական գրամագլխոյ 947 ռուբլի 90 կոպ. արծ. գրամոյ գումարէն ծախուկ և ժամանակագրաց Գպրոցին և Խորհրդարանի կառավարութեան համար 499 ռ. 16 կ. արծ., ուստի առաջարկել հոգաբարձական խորհրդարանին որ ներկայ տարւոյս մէջ նոյնպիսի ծախուց համար ի գործ դնէ մնացեալ 211 ռ. 76 և կէս կ. արծ. և ներկայ տարւոյս մէջ գոյանալու հիմնական և պատրաստական գրամագլխոյ տոկոսաց և անգամոյ բաժանորդագնոյ չորս մասին երեք մասը: Երկրորդ՝ մեծարգոյ պատուական գործիչ Յովհաննու Ա՛ինեանան Պետրոսեանց, մեռ ոմէ Պատասխան չլինելոյ, Գ. Գոլդայ Վ. ոռ օղլուհանց և Յովհաննու Ղասումեան Սահլատեանց ազգասիրական զգացմանց և նուիրատուութեանց համար յայտնել նոցա լուրջ շնորհակալութիւն, երրորդ՝ համաձայն Ց. Ը. յօդուածոյ Ա՛ստնտպրութեան Ընկերութեան այս կարգադրութիւնը և 1868 ամի տարեկան հաշուը տալ տալով վառն ընդհանուր տեղեկութեան:

(Ի վկայ բնագրին ստորագրեալ են Անդամք Մարդասիրական Ընկերութեան վաճառուն անձինք).

Ընդ բնագրին համեմատ է. Նախագահ խորհրդարանի Ընկերութեանն ԵՊԻՓԱՆ ՊՈՊՈՅԵԱՆՑ.

Ազնուական Պարոն Պօղոս Մկրտիչ Գաբրակէօղեանց Պ՛արտաղրի՝ յօդուտ և ի յառաջադիմութիւն հայոց օրիորդաց դպրոցին Նոր-Նախիջեւանոյ երկու հարիւր ռուբլի նուիրած լինելով, ըստ խնդրագրութեան բարեսիրտ Տիկնոջ Հուլիա Պետրոսի յիշեալ դպրոցի, և ըստ յայտարարութեան Ա՛ժանտարարիս փոխ.— Թումանեանցին Նոր-Նախիջեւանայ, ի հետեւութիւն Նորին Ա՛ստղիկոսը բարեհաճեցաւ յատուկ կոնդակ Հայրապետական օրհնութեան շնորհել վերոյիշեալ Ազգասէր և ուսումնասէր նուիրատուին:

Եպէ թէ յիշեալ նուանդուն Հայը՝ լուր այսպիսի առատաձեռն բարեգործութիւնը իւրաքանչիւր տարի շարունակելու անձկալի ուխտը կրնայ, նաև մեր սիրելի Ազգայնոց ձեռնհաս մասին բարի նախանձ և յորդոր նոյնպիսի գեղեցիկ համբաւը տանայր:

Թ--ԻՑ ՏԱՐԵԴԱՐՁ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ Ի ՏԱՃԿԱՍՏԱՆ.

"Ա՛խալքալաք—Խակլէխի գաշտափայրն երէկ (Ա՛պրիլի 24 ին), Ազգային Սահմանադրութեան բնակորով տոնախաղին առաւել շքեղութիւն պիտի տար, եթէ այն րոպէ

ծղին պեղեկութիւնն ալ բերով՝ վաղոյնէն ու գաշտը ձահճնելու չզարձնէր։ Ա՛սպա-քալաքիս ամեն թաղերէն խուռն բազմութիւն գիմած էր ի պէյ.քօղ. բայց տակաւին շոգենաւէն չէլած, անձրևն առնելով դէմքերը սկսեցուց։ Ինչպէս արդէն ծանուցուած էր, Ամեն. Տեղապահ Արբաղանը ժողովրեան ջերմ թախանձանաց չկրնալով դիմանալ՝ պէյ.քօղ գացած էր Ս. Պատարագ մատուցանելու։ Շոգենաւներուն հասած ժամանակ անձրևն սրդելք եղած որ կանոնաւոր թափօր մը կազմելով եկեղեցին և անկէ ալ գաշտավայրն երթային. սակայն որչափ որ կարելի էր հանդիսը զուարթացնելու ջանքեր եղան։ Ա՛ծապատիւ Փանոսեան էֆէնտին յատուկ շոգենաւ մը բռնած էր Ազգապետ վարժարանի աշակերտուհեաց դասը, որք շոգենաւին պէյ.քօղ հասած ժամանակ անմիջապէս չկրցան դուրս ելնել անձրևին պատճառաւ։ Անձրևը քիչ մը դադրած միջոցին, օրիորդները շոգենաւին միջէն ազդային երգեր երգեցին, և խուռն բազմութիւն մ՛ալ նաւամատոյցը լցուելով ունկնդիր եղան։ Օրիորդ մ՛ալ կարճ՝ բայց ազգու ճառ մը խօսեցաւ, զոր բոլոր հանդիսականք ծափահարեցին։ Յաջորդ 6ին եռանդ քիչ մը բացուելով բազմութիւնը նուագդպրանոցով Հիւնքեար—Իսկէլէսի գիմեց, ուր յետոյ Ազգապետ վարժարանի աշակերտուհիք ալ եկան, և առուտուրին անդին ամիրթէաթրոնի սիմս պատրաստած տեղ մը նստելով երգեր երգեցին։ Ամեն Տեղապահ Արբաղանն և Գեր. Տ. Ներսէս եպիսկոպոսը վրանի մը ներքև նստած էին, ուր մեկ երկու ճառեր խօսուեցան։ Գեր. Տ. Ներսէս Արբաղանն ալ բարեմաղթութիւններ ըրաւ վան կենաց մեր Օգոստ. 14 երեկոեան, որոյ բարձր շնորհիւ ազգինիս իր նիւթական և բարոյական զարգացման կաշխատի։ Յետոյ Ամեն. Տեղապահ Արբաղանն աշակերտուհեայ գանուած տեղն ալ իր ներկայութեամբը պատուեց։ Ցաղթողուրդը մեծապէս գոհութիւն կ՛յայտնէր Տ. Ներսէս Արբաղանութենէն՝ այս ազգային հանդէսն իր ներկայութեամբ պատուելուն համար։ Յամը 9ին միջոցները ցուրտ հով մը փչելով, ամեն մարդ դրեթէ ակամայ բաժանուեցան Հիւնքեար—Իսկէլէսիի գաշտէն, որ ազգայնոց սիրոյ և միութեան զգացմանց յայտարարութեան հանդիսական մ՛եղած է, և շոգենաւները գարձան, ոչք քիչ մը վերջն իրենց անիւները գարձնելով Բուրգազլուի իրենց տեղն եա տարին նուագարանները և ազգային երգերու ձայներով։

—

"Ամանթիոյ Ազգապետ վարժարանի աշակերտուհիները՝ թէ իրենց վայելչատիպ կերպարանքովը (ամենն ալ միակերպ սպիտակ հագած), և թէ քաղցրանուագ երգերով երկուստեք ազգային հանդիսին շուքն ալեցուցին։ Պոյսեցիական պալատին և Խալթ. Ա՛ծ Նշանքոսին ապարանին առաջևէն անցած ժամանակնին քանի մը վայրկեան կանգ առնելով բարեմաղթութեան երգեր երգեցին, որուն համար Խալթ. Ա՛ծ—Նշանքոսը յատկապէս իր պաշտօնատուներն էն մեկը երկզարկի նաւակաւ մը շոգենաւը ղրկելով գոհութիւն յայտնեց։

Յիշեալ աշակերտուհեայ վրայ տեսնուած ընդհանուր բարեկարգութիւնը, և մանաւանդ երկուստեք ազգային տօնին այս կերպով մատնակցիլն ընդհանուր գոհութեան առիթ եղած, որուն համար Ազգապետ վարժարանի տնօրինութիւնը շնորհակալ ըլլալ կ՛ուզէ։

(Մասիս Օրաթերթ Թիւ 363)

«Մեղու Հայաստանի» լրագրի 23 համարի մէջ ուրախութեամբ սրտի հետեւեալը կը կարդանք։

"Ամսոյս 18 ին եղաւ հանդիսաւոր բացումը նորահաստատ Հայ օրիորդաց ուսումնարանի յանուն սրբուհոյ Գայիանեայ։ Յաջորդ 9-ին առաւօտեան հրաւիրեալների մեծ մասը, այսինքն, մի քանի եկեղեցեաց առաջ քահանաները իրանց միաբանութեամբ եւ երեխոխաններով, դպրոցի խնամակալները, ուսուցիչները, աշակերտուհիք իրանց ծնողների հետ, ժողովեցան դպրոցի համար վարձած . . տանը . . . ։

"Յաջորդ 10-ին Սրբազան Առաջնորդ Տ. Կարապետ Եպիսկոպոսը, որ էր պատճառը այս դպրոցի հիմնարկութեան, բարեհաճեցաւ ինքն անձամբ ներկայ գտանվելու կատարելու դպրոցի օրհնութեան հանդէսը։ Օրհնութիւնը կատարելից յետոյ, Նորին բարձրը Սրբազնութիւնը օրհնեց ջուրը, որով սրսկեցան բոլոր ներկայ գտնուողները։ Օրհնութիւնը վերջանալից յետոյ ալաժանապատիւ Տէր Յարութիւն քահանայն Սուքիասեանց եւ պ. Ա. Գրիգորեանցը, դպրոցի տեսուչը, կարդացին ճառեր, որոնք այստեղ հաղորդում ենք մեր յարգոյ ընթերցողներին։ Յետոյ Նորին բարձր սրբազնութիւնը արաւ համառօտ եւ ազդու առենախօսութիւն, որի բովանդակութիւնն էին թէ իրան դիտող պատճառները այս օրիորդական դպրոցը հաստատելու, եւ թէ դպրոցների նշանակութիւնը ընդհանրապէս, որոնք Նորին Բարձր Սրբազնութիւնը կոչեց եկեղեցու բեմեր, որոնցից պէտք է քարոզվի կրթութիւն եւ ուսումն մատաղ օրորոցներին, որով սոցա մէջ ծաւալի բարեպաշտութիւն, ջերմեռանդութիւն, սէր դէպի Հայ կրօնը եւ եկեղեցին եւ ազգը, ջերմեռանդութիւն, որնոր այժմ առաւած է նախանձայուզ մեր ժողովրդոց մէջ։ Յետոյ փեղկերի կերպով կապեց Սրբազան առենաբանը վերոյիշեալ մաքերի հետ եւ սրբ-

բութիւն Գայիանէի անունը, որնոր կրում է իր վերայ դպրոցը, ասելով, թէ սուրբ Գայիանէի անունն է կրում դպրոցս, Գայիանէի, որնոր եօթանասուն կուսանաց կրթող մայրն էր եւ կրթեց նրանց ասուածպաշտութեան եւ ջերմեռանդութեան մէջ, այնպէս, որ նոքա մեր փրկչին հաւանացուն եղան եւ եկեղեցու նահատակների շարքը մնան։ Այնպէս եւ այս նորահաստատ ուսումնարանը, որ կրում է յիշեալ սրբուհոյ անունը, նորա հովանաւորութեամբ եւ բարեխօսութեամբ Աստուծոյ առաջին, պէտք է կրթէ իրան տպատրեալ Հայ օրիորդներուն ջերմեռանդութեան, սրբակեցութեան եւ աստուածպաշտութեան մէջ, լուսաւորելով նոցա միտքը վիտութիւններով եւ արհեստներով, որ նոքա ժամանակով իբրեւ բարի մայրեր, հայ հասարակութեան եկեղեցութեան եւ բարօրութեան պատճառ դառնան, տալով իրանց եւ այլոց զաւակներին բարոյական կրթութիւն։ Սրանկից յետոյ Սրբազան առաջնորդը օրհնելով ամենքին ասպանց հանդէսը։ Ամենքի ուրախութիւնը շատ մեծ էր, բոլորն էլ յոնկարան կատարումն Սրբազան հօր առաձնեներին եւ տարակոյս չկայ, որ այս նորահաստատ ուսումնարանը իր մէջ գործակատար անձանց ջանքով եւ աշխատանքով կ'ծաղկի, եւ առաջինը կ'լինի Օրիորդներ մէջ ու իր հովանաւորութեան ներքոյ կառնի եւ միւսներն էլ, իբրեւ իրան փոքրիկ քոյրերուն, խնամելով հոգալ եւ սոցա կարիքները։ Ներկայ գտնուողների եռանդը եւ ուրախութիւնը այնքան մեծ էր, որ առանց մի խօսք անգամ ասելու շատերը իրանց կամքը բարերար ստորագրվեցան դպրոցին, այնպէս, որ այժմ արդէն բարերարաց թիւը հասաւ մինչեւ 36-ի։ Այս ապացուցութիւն է որ տեղւոյս Հայ հասարակութիւնը խնայելու չէ իր համակրութիւնը յիշեալ դպրոցի համար, որնոր միայն նորա ապագայ բարօրութեան է ծառայելու

լոյ հիմունքներամբ, համեստութեամբ եւ ժամանակի պահանջմունքներուն համաձայն, առանց մնափառութեան եւ ունայն ձեւերով աչքը շլացնելու, ինչպէս սովոր են շատերը անելու, 'ի գնաս իրանց հոգեզաղջութեան յանձնված մանկանց եւ ազգայնոյս՝ 'ի գնաս նոյն իսկ հասարակութեան„։

Յաջորդ 903 թիւ շարաձայներին մէջ Ս. Փրկչեան հիւանդանոցին այցելութեան կատարուած հանդիսին հետեւեալ համառօտ նկարագիրը կը գտնենք։

"Հինգշաբթի օրը Ս. Փրկչեան հիւանդանոցի այցելութեան ժողը մեծ հանդիսիւ կատարեցաւ։

Նախ քան արշին ծանուցուած էր, Ամեն. Տէրտէրապետ Ս. Հայրը հանդիսաւոր պատարագ մատոյց, և յետոյ հիւանդանոցին առանձին թաղերը պտըտելով պատարագներնին մխիթարեց։

Հոգաբարձութիւնն այս մասնաւորական այցելութեան հանդիսին ազգային ժողով մը կերպարանք տուած էր։ Հիւանդանոցի պատերն եւ ուրիշ յարմար տեղերը կանանցներով և ծաղիկներով զարդարուած էին, և յատկապէս նուագարան բռնուած էր 'ի գործածութիւն այցելուաց և պատարագելոց։ Հարիւրի չափ հրաւիրելոց հայկերոյթ տրուեցաւ, նոյնպէս և հանգոյն պատարագելոց։

Ազգային երգեր երգուեցան և ճառեր խօսուեցան գալոցի աշխատաց կողմէն։ Վահէդիկ ճառ մ'ալ Մեծ. Տօքթոր Պարոնիկ Մատթէոսեան խօսեցաւ, որ հանգոյն ունկնդրաց գոհութիւն պատճառեց։

Ակնկալուած թիւը 10 հազարի կը հասցնէ նեն, որ ուրիշ տարիներ տեսնուած բան չէր, և ոյ պատիւ կը բերէ ազգիս մասնասիրական զգացմանց։

Հոգաբարձութիւնը բոլոր պատասխանելոց և աշակերտաց զգեստները նորոգած ըլլալով, ընդհանուր բարեկեցութիւն կը փայլէր հիւանդանոցին ամեն կողմը, գլխաւորապէս հիւանդասրանին մաքուր բարեկարգ և կանոնաւոր վիճակին այցելուաց ուշադրութիւնը գրաւելով գոհութեան առիթ եղած է, և շատերը բաղձանք յայտնած են որ միշտ այն վիճակին մէջ պահելու փոյթ և հոգ տարուի, և տարի հանար առատ նուէրներ տրուածէ, որոց գումարը՝ լսածնուս նայելով՝ 12—13 հազար ղուրուշի հասնի է„։*

ԳՈՇՏՈՆԴՆԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Մայիս 30 — Հին-Նախիջեւանայ Յակոբեան Ս. Ա. Ոյայոց Ազգայ (դարալագեաղ) գաւառին Պ. Ըշխիսիլակ գիւղէ բնակիչ Տէր Մկրտիչ Տէր Յարութեան Եփրեմեանց քահանայն՝ խարդախ և ապօրինաւոր մի պատկառելութեան, նեղնալով Ըղցախու (Պ. Ղարաբաղու) վիճակին մէջ խաբեբայական ժողովարարութեան համար խոպան զրկեալ քահանայագործութենէ։

Յունիս 4—Գատնորոյ ընդհանուր կարգադրութեան՝ Տաթեւու Պ. Ա. Հոգեւոր դպրոցը՝ շրջակայքը գտնուած գիւղօրէից Հայ մանկտիքը կրօնական և արտաքին գիտութեանց ուսմամբ զարդարելու համար՝ այժմ չքաւականանալով աշակերտաց բազմութեան, Տաթեւու Ս. Ա. Հատ ավարտութեան թոյլատրեցաւ կրկին երկու մեծ սենեակներ յաւելացնելու յընդարձակութիւն յիշեալ դպրոցին։

,, 6—Պ. Փշատ գիւղ Ծխատէր քահանայն Տէր Ա. Ոարտիրոս արքահամեանին՝ հակառակ իւր սրբազան պատուհասութեան՝ խոտո-

---

*) *Ուրն հարիւր վաթսուն բութլիի չափ։*

յոյզ բնաւորութեան աշակերտ Հրանտ Ղազարեանցը Ընկերանդրապօլսոյ Ս. կառավարութեան, այս անգամ յիշեալ քահանայն երկու եսթեռներ Ս. Աւետիսի վանից դուռը առանց փիլոնի ապաշխարանաց ենթարկելու՝ ի խրատ և ի զգուշութիւն իւր յապագային։

,,, 13—Ս. Ղեղի գեղջ Ծիատէր Ս. Հարօն քահանայն դատեան՝ իւր անվայելուչ միջամտութեան համար նշանադրութեան ապօրինի մի դործի մէջ, քառասուն օր քահանայագործութենէ դադարելով ապաշխարանաց ենթարկեցաւ։

,,, 23 — Ըստ նորոգ կարգադրութեան Ա. Հ. Պատրիարքութեան առանձին կոնդակաւ, Երևանայ թեմին Խարհկարգութիւնքը՝ առաւել յատմարադոյն և դիւրագոյն եղանակաւ գործակալութեանդ փոխեցան։

—

Անցեալ Ս. Յարութեան Առենադպիր Պ. Սուքիաս Թադևոսեանցը իւր միամեայ պաշտօնը լրացնելով՝ ի Ս. Նախկինեան, անցեալ ամսոյ 28-ին վերադարձաւ՝ ի Ս. Յարութիւն։

—

Թադրման Ա. Հ. Պատրիարքի Պ. Սիքողայոս Տէր Յովհաննեսեանը կարևոր պաշտօնեաւ՝ ի Տփղիս գնաց՝ քանի օր միջոցով։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵԵԼԱՅԻ ՄՕՐ ԻՐՆՆ ԱՂՋԻԿՆԵՐՈՒՆ ՀԵՏ.

ԱՆՆԻԿԸ. Մայրիկ, ես շատ բաները ունիմ այսօր ձեզ հարցնելու, թէ որ ինծ հրաման տաք։

ՄԱՅՐԸ. Ի բոլոր սրտէս, սիրելիս, խօսիր։

Ա.Ն. Շատ կը ցանկամ իմանալ թէ արդեօք անձրեւը ուսկից կուգայ։

ՄԱ.Յ. Ծովերէն, գետերէն եւ երկրիս վրայ գըտնուած ամէն ջրերէն։

Ա.Ն. Մի գուցէ վրաս ծիծաղած ըլլաք, միթէ ծովի ջրերը եւ գետերը կրնան երկինք ելնել։

ՄԱ.Յ. (Թէյամանը բանալով) Այս թէյամանին ջուրը ինչ կերպով բարձրացեր է մինչեւ խուփը, կը տեսնես որ լիքն է ջրով, թէեւ կէսը լեցուած էր։ Երբ որ ջուրը կսկսի տաքնալ, նա մանաւանդ եռալ, կը տեսնես որ ծուխ կը հանէ, ուստի այն որ քեզ ծուխի նման կերեւնայ, ջրոյն ամենափափուկ մասն է որ շոգի կամ գոլորշի կըսուի։ Այսպէս ալ բնութեանը մէջ կըլլայ, արեգակի տաքութիւնը անդադար կը քաշէ երկրիս վրայի ջրերուն ամենափափուկ մասերը, որք կը բարձրանան դէպ ի վեր, եւ օդը զանոնք կը վերցնէ թէ որ շոգի չգտնուի վերը։ Այս գոլորշիները միատեղ կը հաւաքուին այնպէս, որ ամբողջ թուխպերով կամ ամպերով կարշաւեն եւ ցրտութենէն ճնշուելով, ջրային կաթիլներ կը դառնան եւ այդ կաթիլները հետզհետէ ծանրանալով, օդը կը պատռեն ու կ'իյնան երկրիս երեսը անմրուր ձեւով։

Ա.Ն. Բայց, մայրիկ, ես չէի կարծեր որ օդը կըրնայ բան մը վերցընել, օդը ոչընչի նման է, որովհետեւ ես շատ լաւ նայեցայ չորս կողմս ու բան մը չկրցայ տեսնել։

ՄԱ.Յ. Այդ օդուն յանցանքը չէ, սիրելիս, այլ քու աչքերուդ յանցանքն է, որ չեն կրնար տեսնել։ Կան շատ բաներ զորս թէեւ չենք տեսներ, սակայն ունին գոյութիւն. օրինակի աղագաւ, կը տեսնես արդեօք այս սենեակին մէջ մեծ փոշի մը։

Ա.Ն. Ո՛չ, մայրիկ, ամենեւին չեմ տեսներ.

ՄԱ.Յ. Ելիր, սիրելիս, դնա սենեակին այն ծայրը ուր արեգակը իրեն ճառագայթները ձգեր է, այնտեղ փոշին կը տեսնես։

Ա.Ն. Այո, մայրիկ, տեսայ բաղմաթիւ փոքրիկ բաներ, որք անդադար կը շարժին։

ՄԱ.Յ. Այն փոքրիկ բաները կըսուին հիւլէ. բոլոր օդը անոնցմով լիքն է. բայց օդուն մասերը շատ ւսելի նուրբ են եւ փոքրիկ, անոր համար է, որ չես տեսներ,

Ա.Ն. Շատ կը ցանկամ, մայրիկ, օդը տեսնել եւ իմանալ թէ արդեօք ինչ գոյն ունի։

Վ.ԱՐԴՈՒՀԻՆ. Միթէ օդը, որուն մասերը այնքան փոքր են, կրնայ գոյն մը ունենալ։

ՄԱՅ. Ա՛յ, զաւակներս, բարձրացուցէք ձեր աչքերը դէպ ի վեր եւ նայեցէք, Թէ երկինքը ինչ գոյն ունի։

Ա.Ն. Երկինքը կապոյտ է։

ՄԱՅ. Ահա այն գոր երկինք կանուանէք, օդն է, որուն մասերը վերը միատեղ կը հաւաքուին եւ՝ կը Թանձրանան։ Դուք հիւլէն չէք կրնար տեսնել այնտեղ ուր արեգակ չըլլայ. որովհետեւ մասերը մեկ մէկէ շատ հեռու կըլլան։ Բայց կուզէք որ այժմ ձեզ հիւլէն ցոյց տամ եւ իրաւունէ կրնաք տեսնել, որովհետեւ այն ժամանակը մասերը մէկ մէկու կպած կըլլան։ (Այս խօսքերուն վրայ մայրը կառնու աւելը եւ կսլէ սենեակը)։

Ա.Ն. Ո՛հ այս ինչ փոշի է, մայրիկ, չեմ կրնար բան մը պարզ տեսնել, փոշին աչքերս կը կուրացընէ։

ՄԱՅ. Կը տեսնէք ուրեմն փոշին կամ հիւլէն, որովհետեւ փոշւոյ այս ամէն սերմունքները մէկ մէկու կպած են։ Այսպէս ալ մեր չորս կողմը պատած օդը այսաեղ չէք կրնար տեսնել, որովհետեւ մասերը մէկ մէկու չեն կպած։ Օդուն մասերը վերը միայն կը հաւաքուին եւ կը Թանձրանան, այն ժամանակը կրնաք տեսնել։ Չասկըցընեմ ձեզ օրինակով մը Պօրտո գինին ցուցաքի մը մէջ լեցընելով. կը տեսնէք որ շատ կարմիր է. ահա ես կառնում մատիս ծայրովը մի կաթիլ եւ կը ձգեմ գայն Թաշկինակիս վրայ. նայեցէք, հաւաներս, Թաշկինակիս վրայի գինին չէ այնքան կարմիր, որքան գաւաքին մէջինը. որովհետեւ գաւաքին մէջը մեծ քանակութեամբ մասեր կան եւ որք աւելի Թանձրացած են, քան Թէ Թաշկինակիս վրայ։ Տեսէք նոյնպէս այս կարմիր մետաքսեայ Թելը, որ առանձնակի առնուածը քիչ կարմրութիւն կունենայ բան Թէ կծկածը։

Ա.Ն. Ուրեմն, մայրիկ, ես այնպէս կը մակաբերեմ, որ օդը մարմին մըն է բազմաթիւ փոքրիկ կապոյտ մասերէ բաղկացած. բայց չեմ կարծեր որ այս փոքր մարմինները, որուն մասերը այնքան տկար են, կարողանան վերցընել ջուրը, որ աւելի ծանրագոյն է, քան Թէ օդը. որովհետեւ ջրի մասերը բաւականի հաստ են ինչպէս որ կը տեսնեմ։

ՄԱՅ. Այդ ինչ շուտ բնագէտ դարձար, Աննիկ. Ճշդուն մը որ աւելի ծանր է, քան Թէ օդը, այնու ամենայնիւ օդը լաւ կը վերցընէ զայն։ Պարտէզը երէկ չես պատահած մեծ անձրեւէ մը վերջը։

Ա.Ն. Այ՛, մայրիկ, պատահած եմ։

ՄԱՅ. Չես նկատած որ իւրաքանչիւր փոքր ճիւղերուն կամ տերեւներուն ծայրը կախուած ջրային կաթիլներ կը գտնուին։

Ա.Ն. Այ՛, մայրիկ, ես շատ անգամ կանգնած եմ զանոնք դիտելու համար. նա մանաւանդ երբոր արեգակը իրեն ճառագայԹները անոնց վրայ կը ձգէր, աղամանդի պէս կերեւնային, որք ամէն տերեւներուն ծայրը կըլլան։

ՄԱՅ. Ի՞նչն է այն աղամանդները վերցնողը. այն օդն է որ աւելի ծանր է քան աղամանդները, բայց վերջը ջրային փոքրիկ գնդակը կը հաստնայ. որովհետեւ տերեւի վրայի մնացեալ ջուրը կը միանայ փոքրիկ գնդակին հետ, որով օդէն աւելի ծանրանալով կը պատռէ օդը ու կիյնայ երկրիս երեսը։

Ա.Ն. Այդ շատ լաւ կը հասկընամ այժմ. ջուրը անշուշտ աւելի ծանր է, քան Թէ օդը, Թէ որ ջրին եւ օդուն քանակութիւնը հաւասարաչափ ըլլան. բայց այս ալ զարմանք չէ որ մեծ որքանութեամբ օդը կարենայ վերցընել փոքրիկ քանակութեամբ ջուր մը։ Ինչպէս նաւը ըստ ինքեան աւելի ծանր է ջրէն, բայց սակայն նաւին տակը կայ այնպիսի մեծ քանակութեամբ ջուր, որ զայն կը վերցընէ, կը պահպանէ, այնպէս է, մայրիկ։

ՄԱՅ. Այ՛, սիրելիս, Ճշմարիտ է ըսածդ։

ՎԱՐԴ. Բայց, մայրիկ, Դուք ըսիք Թէ Աննիկը բնագէտ է դարձեր, մինչէ օրիորդներն ալ պարտական են սորվիլ այդ գիտութիւնը։ Ես միայն բժիշկներու համար կը կարծէի։

ՄԱՅ. Ո՛չ, սիրելիս, բնագիտութիւն բառը որ ըստ Գաղղիացւոց Ֆիզիք կը նշանակէ, գիտութիւն մը որ կը սորվեցընէ ամէն մարմինները ճանաչել։ Բնագէտ կըսուի այն մարդը, որ կիմանայ օդուն, կրակին, ջրին եւ երկրիս բնութիւնները. նա գիտէ նաեւ մարդկանց եւ կենդանեաց մարմինները, ծառերը, բոյսերը, ծաղիկները, հանքերը եւ մետաղները, ուստի օրիորդներն ալ կրնան գիտենալ այդ ամէնը։

ՎԱՐԴ. Որոնք են, խնդրեմ ասացէք, հանքերը եւ մետաղները։

ՄԱՅ. Ոսկին, արծաԹը, կապարը եւ ուրիշ բաները, որոնք գետնէն կելնեն։

ՎԱՐԴ. Ոսկին միՆէ գետնէն կելնէ մայրիկ։

ՄԱՅ. Այ՛, զաւակս։ Այս օր բաւականի խօսեցանք բնագիտութեան վրայ, ժամանակն ալ շատ ուշ է։

գալ անգամ մեզ կը պատմեմ նախ մի փոքրիկ առակ ՝ւկնորսի եւ ձանապարհորդի վրայ, եւ ապա կը կըրկնենք մեր սրբազան պատմութիւնները։

Թարգմանեալ ի Վաղղեականէ

Մկրտիչ Տէր Գէորգեան ՁԵՆԱՆԵԱՆՑ

Ղրիմեցի։

Ի 23 մարտի 1869 ամի

Ի Ս. Վ[անս Ձաւիճոյ։

ՍԱՐՆԱԿԱՆ

Ողջոյն Թռչնեակիդ, որ յիմ պատուհան
Առեալ զհանգիստ, ճաւուղես միայն։
Ողջոյն, որ զմայն հեզասոյլ, քնքուշ,
Կենսաւէտիկ ընդ շունչ զեփիւռին ընուս։
Մինչ նա Թեւ ի Թեւ խաղայ ցողաբեր,
Թողուլ ի մեր սիրտ զիւր սէր եւ զխինդ։
Անմկուածեան արցունք յայլս իմ լուսաբոց
Կախին արդ ի շար ի սէր քոյդ երգոց։
Երգոց, ուս յառաջ ի սուգ տրտմութեան
Ունկն կախէի յիմ սուրբ Հայաստան։
Ա՛հ, Թէ կայսրան քեզ լինէր միայն
Շքեղ, բայց տխուր... իմ այս պատուհան.
Ա՛հ, Թէ Թերաքամ բբօք զքեզ անմկոտ
Կարէի դիտել յամէն առաւօտ։

Չի դու ի ծոցոյ վերին Արարչատայ
Հիւր եկիր եւ յայց հէք որդւոյս նորա։
Արդ միայնութեանս կարեկից ընկեր,
Եւ միշտ մխիթար լեր, Թռչնիկդ իմ, լեր։
Եւ յայս պատուհան հաճեաց քեզ դադար
Առնուլ եւ երգել միշտ յիմ մխիթար.
Չի սիրտ պանդխտին, զերծ նաւաբեկին,
Չիցէ ճմեսցէ իսպառ սուգ յետին։

ԱՒԵՏԻՔ ԱՒԱԳ ՍԱՐԿԱՒԱԳ
ՓԻՆԱՁԵԱՆՑ

ՁՈՒԱՐՃԱԼԻՔ

ՁԱՆԳԱՓ

Ինչ քաղցրալուր եւ ի՛նչ անոյշ
Քո ծայն կուգայ մութ լուսոյն.
Բոլոր մարմնոյ ինչպէս աշխոյժ
Կազդէ ախորժ քո հնչիւն,
Երբ խոր քնոյ մէջ ընկղմած
Մահկանացուն կոստնու վեր,
Միտքը կուգայ կեանքն ու Աստուած
Եկեղեցւոյ քաղցր տաղեր։

—

Կարծես կասէ, հնչմամբ քաղցրիկ
Ձարթիր փութա քովիդ վանք
Եւ երբ կերթաս նոյնպէս „զարթիք"
Կերգեն Դպիրք եւ տղայք։
Ի՞նչ զգացմունք վեհ սրբազար
Կղգայ քո սիրտ այն ժամուն
Աղքատ, հարուստ, առողջ տկար
Կուտան ուրախ գոհութիւն։

—

Թէ մահճին մէջ պառկող խաղաղ
Թէ արթնցած զիւղացին,
Թէ ծովաչու ճամբորդ խիզախ
Մօտենալով եղերքին,
Քո հնչիւնը երբ կլսեն
Խաչ հանելով երեսնին,
Օրհնեալ է միշտ Աստուած կասեն
Եւ մեծայոյս կըհրճուին։

—

Եւ զիւղացիք պարզ արտավար
Որ ամբողջ օր քրտնելով,
Կպատրաստեն ծմրան պաշար
Բահ ու բրիչ շալկելով.
Երեկոյեան ի քո հնչիւն
Աղօթելով լռելեայն
Հանդարտաբայլ կդառնան տուն
Տեսնել իւրեանց զերդաստան։

—

Քաղցր է հնչիւնդ այն զանգակ,
Տաւիղն ու քնար կմոռնան
Երբ կյիշես յայդուն նոր կեանք
Եւ հանգիստ քուն իրիկուան.
Բայց երբ Թրթռակ եւ տխրագին
Կհնչէ յօդս քո պղինձ,

Մեղաւորին եւ արդարին
Պպաշարէ սուգ ծախիծ։

—

Մէկ անդամայ մարդկայնութեան
Թէեւ մահը կը յիշես,
Բայց կարծես Թէ բոլոր բնութեան
Վերայ անշուք քոյր ծնես.
Եւ մօտակայ բոլոր մարդիկ
Թողուով հրնուանք յահ ու վախ,
Միմեանց կ'իշեն իւրեանց կընիք
Թէ կեանքէն վերջ կուգայ մահ.

—

Այն մահէ չկինիր խոյս
Այն մանգաղէն սայրասուր,
Բայց խաւարին յաջորդն է լոյս
Եւ լաւ գործոց ծոխ տրիտուր.
Ջսարսափինք այն հնչիւնէն
Որ մահադոյժ է յանկարծ,
Ցաղթող խոչն է մեր ապաւէն
Այն որ պաշտպան էր մեր Հարց։

—

Հաչին նշան մեր հայրերուն
Խարիսխ էր միշտ հաւատոյ,
Եկեղեցիք վանքեր սիրուն,
Աղբիւրք յուսոյ եւ սիրոյ,
Հաչով դրոշմենք մեր ճակատը
Երբ զանգակը կզարնէ.
Ամուր պահեմք մեր հաւատը
Այն մեզ Թէ յոյս Թէ կեանք է։

Ս. Մարուքեանց

Կաղիկն որ....զինչ տեսանէ ի մարդոյ, զայն և ինքն առնէ։ Եւ եհաս զի ձկնորսն ձգեաց զուռկան ի վերայ ձկանցն, և ինքն գնաց ի հայց։ Եւ կապիկն իջեալ ի ծառէն էառ զուռկանն, և նման ձկնորսի կամեցաւ ձգել ի վերայ ձկանցն. այլ ինքն ըմբռնեցաւ ի նմանէ, և ասէ լալով յիւրում ըմբռնեցոյց վանդզ հանց կոլմ ձգեցի զձեռքս՝ որ ոչ էի հմուտ։

Ցուցանէ առակս, Թէ՝ ով մարդ, օտարաց մի՛ ձեռն արկաներ և մի՛ ցանկար գործոյն, որ չես հմուտ և չէ՛ քեզ պատշաճ, Թէ մտամբ նաւոր և Թէ հոգևոր աստիճան. զի կորուստ լինի քեզ և ոչ շահ։

(Ագուեսաղիրք)

Յողովեցան մկունք ի մի տեղ և սկսան հետ միմեանց իօսել, և ասեն. ընդէ՞ր է որ մեք ոչ զբեհ ունիմք և ոչ զեղջիւր, որ կատուն զմեզ դիւրաւ բռնէ. եկայք զի խորհեսցուք բարի հնար մի. և սրեցին փայտս և կապեցին ի գլուխս իւրեանց, և ասեն, երբոր կատուն գայ, կուտինք հետ՝ որ զմեզ չբռնէ։ և ահա եկն կատու մի և մկերն փախեան և ոչ կարացին ընդ ծակն ի նեղս մտանել. և կատուն սկսաւ ջարդել զամենեսեան։

(Անդ)

ՀԸՆԴԵԼՈՒԹԻՒՆ

1.

Այն ինչ աշխարհ է արարած,
որ կարօտի լուսաւորոյ.
որքան օրը լինի վճիտ
նորա համար է միշտ ամպած։

2.

Այն ինչ տուն է անհիմն փորրիկ,
յորում բնակին յոլով մարդիկ,
երկու շքեղ լաւ դռներով,
ել եւ մուտս առնեն միով։

Յովհ. Միրզաբէկեանց։

ԱԶԴ

Մի քանի բանասէր պատճառներէ առիթեալ տպագրանը մի ամիս ալեաթ դադարի ուսան յաջորդ օգոստոս ամսագրոյն սակաւ ինչ ուշանալուն համար կը յուսամք, որ մեր սիրելի Ազգայինք ներողամիտ կը լինին։

Ներկայ Թուոյս 55 երեսի առաջին էջին ծանօԹութեան մէջ դրուած «հրեշտակային», պէտք է «հրեշտակապետն» ընթերնուլ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԲԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱՑՆԻ